# ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳ. ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
# Եվրասիական կենտրոնի մեծ աշխարհաքաղաքական վերաբեռնավորման ավարտը

ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ
*Բրյուսովի պետական համալսարան,*
*Հեռանկարային հետազոտությունների և նախաձեռնությունների կենտրոն*

ԱՐԱՔՍ ՎԱՐԴԱՆՅԱՆ
*Հեռանկարային հետազոտությունների և նախաձեռնությունների կենտրոն*

*Հոդվածում նոր աշխարհակարգի ձևավորման վրա ազդեցության տեսակետից քննարկվում են Եվրասիական Կենտրոնում տեղի ունեցող հիմնական գործընթացները: Դիտարկվում են տարածաշրջանում Միացյալ Նահանգների և Ռուսստանի մրցակցության, Եվրամիության արտաքին քաղաքականության մեջ աշխարհաքաղաքական գործոնի նշանակության կտրուկ մեծացման, եվրասիական գազի՝ դեպի Եվրոպա տեղափոխման, ինչպես նաև Արևելյան գործընկերության նախագծերի իրականացման, Թուրքիայի արտաքին քաղաքական կողմնորոշումների կտրուկ փոփոխության, Հարավային Կովկասի ճանաչված պետությունների ժողովրդավարացման և միջազգային ինտեգրման գործընթացների ազդեցությունը աշխարհակարգի ձևավորման վրա: Բացահայտվում է, որ ձևավորվում է հագեցման իրավիճակ, որի դեպքում տեսանելի ապագայում հնարավոր չէ մրցակցող կողմերից որևէ մեկի լիակատար գերիշխանություն: Թեև կարծիքներ կան, որ հաստատվում է բազմաբևեռ աշխարհակարգ, սակայն առաջարկվում է ձևավորված ձևաչափը կոչել «ոչ միաբևեռ, ոչ բազմաբևեռ աշխարհակարգ»:*

**Բանալի բառեր**
Եվրասիական կենտրոն, նոր աշխարհակարգ, ԱՄՆ, Ռուսաստան, Եվրամիություն, Հարավային Կովկաս, Թուրքիա, Արևելյան գործընկերություն, եվրասիական գազի փոխադրում

## Նախաբան

Հոդվածում աշխարհաքաղաքական համատեքստում քննարկվում են վերջին տարիներին տեղի ունեցող իրադարձությունները մի տարածաշրջանում, որը ոչ միայն համաշխարհային պատմության

ընթացքում հաճախ եղել է իրադարձությունների զարգացման կիզակետ, այլև տարբեր անվանումներով առանցքային տեղ է գրավել աշխարհաքաղաքական տեսություններում ու հայեցակարգերում: Հ. Մաքինդերն այդ տարածաշրջանն անվանել է Եվրասիական կենտրոն (Eurasian Heartland)[1], Զ. Բժեզինսկին՝ Եվրասիական կամ Գլոբալ Բալկաններ[2], վերջին տասնամյակներում այդ տարածաշրջանում ԱՄՆ քաղաքականությունն ուրվագծող հայեցակարգում այն կոչվում է Մեծ Միջին Արևելք[3]: Այդ տարածքը ներառում է Հարավային Կովկասը, Մերձավոր Արևելքը, Կենտրոնական Ասիան, Թուրքիան, Իրանը, Աֆղանստանը: Տարածաշրջանի աշխարհաքաղաքական նշանակությունն առավել ամփոփ բնութագրել է Հ. Մաքինդերը. «Ով կառավարում է Կենտրոնը, նա տիրապետում է Աշխարհ-կղզուն, իսկ ով կառավարում է Աշխարհ-կղզին, նա տիրապետում է Աշխարհում»[4]:

Յուրաքանչյուր հարյուր տարին մեկ տարածաշրջանում փլուզվում է ուժային կենտրոններից մեկը կամ մի քանիսը, խախտվում է աշխարհաքաղաքական հավասարակշռությունը, ծավալվում է պայքար ազդեցության գոտիների վերաբաժանման համար և հաստատվում է նոր հավասարակշռություն ու աշխարհակարգ[5]:

ԽՍՀՄ փլուզումով վերացավ երկբևեռ աշխարհակարգը, հետխորհրդային և ԽՍՀՄ ազդեցության ներքո գտնված տարածքներում առաջացավ ուժային վակուում և այն զբաղեցնելու հնարավորություն՝ ինչպես ձևավորվող աշխարհակարգում դիրքերի, այնպես էլ տարածաշրջանային ազդեցության ձգտող մի շարք երկրների համար: Նոր աշխարհակարգի ձևավորման գործընթացը

---

[1] **Mackinder H.** The Geographical Pivot of History, *The Geographical Journal*, 23, 1904

[2] **Brzezinski Z.** The Grand Chessboard: America Primacy and its Geostrategic Imperatives. New York: Perseus Books Group. 1997. Chapter 5.

[3] **Güney A. and Gökcan E**.The ‘Greater Middle East’ as a ‘Modern’ Geopolitical Imagination in American Foreign Policy, *Geopolitics.* 2010, **15**, 1, 22–38.

[4] **Mackinder H.** Democratic Ideals and Reality. London. Constable and Company. 1919, p. 150.

[5] **Torosyan T.** The Return of Turkey, *Russia in Global Affairs,* 2009, 3, July–September, 120–129. https://eng.globalaffairs.ru/number/n_13592

կարելի է բաժանել երեք՝ «ռոմանտիկ», արտաքին կողմնորոշումների ձևավորման և ավարտական փուլերի[6]:

Առաջին շրջանի գլխավոր առանձնահատկությունն այն էր (ու, միգուցե, բացթողումը), որ Արևմուտքում կարծում էին, որ հետխորհրդային տրանսֆորմացիան ժողովրդավարացման երրորդ ալիքի[7] ուշացած շարունակությունն է և այդ գործընթացում գտնվող բոլոր երկրներում հաստատվելու են ժողովրդավարական վարչակարգեր: Ակնհայտ է, որ դա շատ նպաստավոր կլիներ միաբևեռ աշխարհակարգի հաստատման համար, ինչին ձգտում էր Միացյալ Նահանգները՝ երկբևեռ աշխարհակարգի մյուս բևեռի փլուզումից հետո: Բնական է, որ Սառը պատերազմում հաղթելուց հետո պաշտոնական Վաշինգտոնը լավատեսորեն էր տրամադրված և չէր պատրաստվում կտրուկ միջոցներ կիրառել հետխորհրդային տարածքի երկրների ցանկալի ընթացքը ուղղորդելու համար: Դրանով էին պայմանավորված նաև այդ շրջանում Ռուսաստանի հետ բավական ջերմ հարաբերությունները: Այդ տարածքի մահմեդական երկրների կողմնորոշումը վստահվեց Անկարային՝ «թուրքական մոդելը»[8] որպես զարգացման ուղի ներդնելու առաքելությամբ: Սակայն 90-ականներին պարզ դարձավ, որ Թուրքիայի աշխարհաքաղաքական, ֆինանսատնտեսական և մյուս

---

[6] **Torosyan T., Vardanyan A.** The South Caucasus Conflicts in the Context of Struggle for the Eurasian Heartland, *Geopolitics*, 2015, **20**, 3, 559-582. DOI: 10.1080/14650045.2015.1050717

[7] **Huntington S.** The Third Wave:Democratization in the Late Twentieth Century. Norman: University of Oklahoma Press. 1991.

[8] **Bal İ.** The Turkish model and the Turkic republics. *Perceptions: Journal of IinternationalAffairs.* 1998. **3**, 3, 180–198. http://sam.gov.tr/wp-content/uploads/2012/02/IdrisBal.pdf ; **Dal E. P. and Ersen E.** Reassessing the "Turkish Model" in the Post-Cold War Era: A Role Theory Perspective. *Turkish Studies,* 2014, **15**, 2, 258–282, DOI: 10.1080/14683849.2014.926238; **Erickson E.J**. Turkey as a regional hegemon – 2014: Strategic implications for the United States, *Turkish studies*. 2004. **5,** 3, 25–45; **İdiz S.** Do Arabs know what the Turkish model is? *Hurriyet daily news*. 2012, 28.02. http://www.hurriyetdai lynews.com/opinion/semih-idiz/do-arabs-know-what-the-turkish-model-is-14789; **Greenberger R.S.** «Turkish model»: Baker tours Central Asia seeking promises and ties. *Wall Street Journal*. 1992, 14.02, p. 12; **Mango A.** The Turkish Model, *Middle Eastern Studies,* 1993, **29**, 4, 726-757; The Turkish model: A hard act to follow. *Economist*. 2011.06.08. https://www.economist.com/node/21525408.

կարողությունները բավարար չեն նման դերակատարություն ունենալու համար[9]: Արդեն պարզ էր նաև, որ հետխորհրդային տրանսֆորմացիան շատ ավելի բարդ ու բազմավեկտոր գործընթաց է, քան սկզբում թվում էր:

Առաջին փուլի ավարտը և երկրորդի սկիզբը կարելի է համարել 2004թ., երբ դրանում գտնվող երկրները բաժանվեցին երեք խմբի՝ ըստ հետագծի և հաստատված վարչակարգերի[10]: Առաջին խմբի համար, որում ընդգրկվեցին ԵՄ-ին անդամակցած երկրները, հետխորհրդային տրանսֆորմացիան ավարտվեց: Այն կարելի է համարել ավարտված նաև Կենտրոնական Ասիայի երկրների և Ադրբեջանի համար՝ որպես կոշտ ավտորիտար, որոշ դեպքերում՝ ամբողջատիրական պետություններ: Հայաստանի, Վրաստանի, Ուկրաինայի և Մոլդովայի համար տրանսֆորմացիան շարունակվեց, քանի որ այդ երկրները դեռևս գտնվում էին միջանկյալ իրավիճակում. ստեղծվել էին բոլոր ժողովրդավարական ինստիտուտները, սակայն դրանց բովանդակային կայացածության տեսակետից դեռևս պետք է լուծվեին շատ խնդիրներ: Եվրամիությունն այս երկրներին նախ ընդգրկեց Նոր հարևանության քաղաքականության ծրագրում (շատ շուտ պարզ դարձավ, որ այն դատապարտված է ձախողման), ապա 2009 թվականից՝ Արևելյան գործընկերության ծրագրում: Արտաքին կողմնորոշումների այս փուլում ակնհայտորեն մեծացավ հետխորհրդային տրանսֆորմացիայի վրա աշխարհաքաղաքական գործոնի ազդեցությունը, ինչը պայմանավորված էր մի քանի հանգամանքով: Ռուսաստանը կարողացել էր հաղթահարել ներպետական դժվարությունների զգալի մասը և կարող էր ուշադրությունը սևեռել սահմանակից

[9] **Winrow M. G.** Turkey's Relations With the Transcaucasus and the Central Asian Republics, *Perceptions: Journal of International Affairs*, March-May, 1996, 136; **Torosyan** 2009, նշվ. աշխ.; **Shlykov P.** The "Turkish Model" in Historical Perspective. *Russia in Global Affairs*, 2018, 2, DOI: 10.31278/1810-6374-2018-2-121-148.

[10] **Torosyan T., Sukiasyan H.** Three Stages, Three Groups and Three Paradigms of Post-Soviet Transformation, *Armenian Journal of Political Science*, 2014, 1, 51-63. DOI: 10.19266/1829-4286-2014-01-51-61

պետություններում ազդեցության վերականգնման վրա, ԵՄ-ի և հատկապես ՆԱՏՕ-ի ընդլայնումն այդ երկիրը համարում էր իր շահերի ոտնահարում ու չէր պատրաստվում լռելյայն հետևել այդ գործընթացի զարգացմանը[11]: Այս փուլը տևեց ընդամենը մի քանի տարի և գործընթացը թևակոխեց վերջին փուլ: Երրորդ փուլի ընթացքում աշխարհաքաղաքական գործոնը դարձել է լիովին գերակշռող և Եվրասիական կենտրոնում տեղի են ունենում իրադարձություններ, որոնք էապես տարբերվում են նոր աշխարհակարգի ձևավորման առաջին երկու փուլերի զարգացման տրամաբանությունից: Դրանց զգալի մասում հիմնական դերակատարություն ունեն Միացյալ Նահանգները և/կամ Ռուսաստանը: Այդ երկրների աշխարհաքաղաքական մրցակցությունում ակտիվ խուսանավումներով փորձում է սեփական խաղն առաջ մղել տասնամյակներ շարունակ Միացյալ Նահանգների և ՆԱՏՕ-ի հուսալի ռազմավարական դաշնակիցը՝ Թուրքիան, որը սկսած 2008 թվականից ավելի ու ավելի հաճախ է դրսևորել իր հիասթափությունն Արևմուտքից և 2016 թվականից գրեթե ամբողջությամբ կենտրոնացել է Ռուսաստանի հետ ակտիվ համագործակցության վրա: Պաշտոնական Անկարան գրեթե մոռացել է դեպի Արևելք՝ մուսուլմանական աշխարհում «թուրքական մոդելի» տարածման իր առաքելությունն ու ԵՄ անդամակցության ձգտումը: Ռուսաստանի հետ լայնածավալ համագործակցությունը՝ S-400 հակահրթիռային համակարգերի գնում, «Թուրքական հոսք» գազային խողովակաշարի և Ակկոյունու ատոմակայանի կառուցում, Սիրիայում գործողությունների լիարժեք ներդաշնակեցում ռուսական կողմի հետ. այս ամենը ուժերի նոր վերադասավորումների ու շրջադարձի լուրջ նախադրյալներ են ստեղծում: Հոդվածի առաջին մասում դիտարկվում են այդ շրջադարձի պատճառներն ու հնարավոր հետևանքները: Իհարկե, Թուրքիան աշխարհաքաղաքական Մեծ խաղում գլխավոր դերակատարություն չի կարող ստանձնել: Այնպես,

[11] **Putin V.** Speech and the Following Discussion at the Munich Conference on Security Policy, February 10, 2007, Munich. http://en.kremlin.ru/events/president/transcripts/24034

ինչպես Ռուսաստանն իր ներկայիս տնտեսական ու ֆինասական հնարավորություններով ակնհայտորեն չի կարող մրցակցել Միացյալ Նահանգների հետ: Սակայն ուշագրավ է թուրքական «Սաբահ» թերթի հրապարակումներից մեկի[12] վերնագիրը՝ «Թուրքիան ցունամի է, Ռուսաստանը՝ փոթորիկ, Չինաստանը՝ գլոբալ տաքացում»: Ըստ հոդվածի հեղինակի, Ռուսաստանը, Չինաստանն ու Թուրքիան «տարերային աղետ» են, որը սպառնում է Արևմուտքին՝ ԱՄՆ գլխավորությամբ: Նման գնահատականը չափազանցություն կարող է համարվել՝ այս երկրները (հատկապես՝ Թուրքիան) առանձին-առանձին դիտարկելիս: Սակայն խնդիրը լրջորեն քննարկվում է նաև Արևմուտքում: Ըստ Լ. Դայմոնդի, «Այսօր Միացյալ Նահանգները համաշխարհային առաջատարի դիրքերն արագորեն զիջում է՝ տեղ ազատելով ավտորիտար երկրների՝ Չինաստանի ու Ռուսաստանի համար, որոնցից առաջինը վերածվում է գերտերության, իսկ երկրորդը վերականգնում է ռազմական հզորությունն ու աշխարհաքաղաքական նկրտումները»[13]: Պետք է հաշվի առնել նաև, որ նպատակադրման տեսակետից մրցակիցների խնդիրները միանգամայն համադրելի են: Եթե Միացյալ Նահանգները պայքարում է ապագա միաբևեռ աշխարհակարգում իր գերիշխանությունը հաստատելու համար, ապա Ռուսաստանի և Չինաստանի խնդիրն ավելի հեշտ է՝ նրանց լիովին կբավարարի միաբևեռության չեզոքացումը: Այդ իրավիճակում Թուրքիայի վերջնական կողմնորոշումը կարող է վճռական նշանակություն ունենալ ռուս-չինական-ամերիկյան աշխարհաքաղաքական մրցակցությունում:

---

[12]**Tutar B.** Turkiye: Tsunami, Rusya: Kasirga, Çin: Küresel isinma, *Sabah*, 2019.11.28. https://www.sabah.com.tr/yazarlar/bercan-tutar/2019/11/28/turkiye-tsunami-rusya-kasirga-cin-kuresel-isinma.

[13] **Diamond L.** Democracy Demotion. How the Freedom Agenda Fell Apart. *Foreign Affairs.* 2019, July-August, **98,** 4. https://www.foreignaffairs.com/articles/2019-06-11/democracy-demotion?fbclid=IwAR0YuRADNTIH5VXjnKr1Gkos7FiWV34e6ceqTjBbJjDBvGB0ZGbc3mmKO_Q

Պատկերն ամբողջական լինելու համար դիտարկվում են նաև տարածաշրջանում մեկ այլ կարևոր դերակատարի՝ Եվրամիության արտաքին քաղաքականության վրա աշխարհաքաղաքական գործոնի ազդեցության մեծացման հստակ նկատելի միտումները: Դրանց առավել ցայտուն դրսևորումները երևում են Եվրասիական կենտրոնում երկու հիմնական ուղղություններով՝ էներգակիրների տեղափոխման ուղիների և դրանք արտահանող երկրների դիվերսիֆիկացիա, ինչպես նաև Արևելյան գործընկերության ծրագրի իրականացում: Ընդհանուր պատկերը լրացնող մեկ այլ գործոն է Հարավային Կովկասում իրավիճակի զգալի փոփոխությունը վերջին տասնամյակում՝ ժամանակ առ ժամանակ էթնոքաղաքական հակամարտություններում պատերազմական գործողությունների վերսկսումներն ու հեղափոխությունները: Հոդվածի գլխավոր նպատակն է այս գործոնների համադրմամբ իրավիճակի վերլուծությունը՝ տարածաշրջանում վերջնական աշխարհաքաղաքական հավասարակշռության հաստատման համատեքստում:

Հոդվածում դիտարկվում են ոչ միայն այդ տարածաշրջանում կատարվող առանձին իրադարձություններն ու երևույթներն, այլև դրանց համադրությամբ ձևավորվող ամբողջական պատկերը՝ որպես Եվրասիական Կենտրոնում ծավալված աշխարհաքաղաքական մրցակցության էական զարգացում և նոր աշխարհակարգի հավանական ուրվագիծ:

## Ազգերը չունեն հավերժական բարեկամներ կամ դաշնակիցներ, ունեն հավերժական շահեր

Լորդ Փալմերսթոնի այս բանաձևը միանգամայն ճշգրիտ է արտացոլում Թուրքիայի արտաքին քաղաքականությունը՝ Օսմանյան կայսրության փլուզումից ի վեր: Հարյուր տարի առաջ, երբ թվում էր, որ շարունակական պատերազմներից ու ապստամբություններից փլուզված կայսրությունից կմնա մի փոքր պետություն, Քեմալ Աթաթուրքը կարողացավ միջազգային մեկուսացման մեջ հայտնված բոլշևիկյան Ռուսաստանին համոզել, որ հավատա-

րիմ դաշնակից է կոմունիստական գաղափարները Արևելքի իսլամական երկրներում տարածելու հարցում, ստանալ այնքան անհրաժեշտ ֆինասական ու ռազմական միջոցներ և դրանց շնորհիվ Թուրքիայի համար ապահովել ազդեցիկ տարածք ու դիրք ունեցող պետության ձևավորման հնարավորություններ: Կարճ ժամանակ անց Թուրքիան կտրուկ շրջվեց դեպի Արևմուտք և 1952 թվականին անդամակցեց ՆԱՏՕ-ին: Թուրքիայում երկու ռազմակայանների (Ինջիրլիքի օդանավակայան և Քյուրեջիքի ռադիոլոկացիոն կայան) կառուցումը ոչ միայն ամրապնդեց համագործակցությունն ու նպաստեց թուրքական բանակի արդիականացմանն ու համապատասխանեցմանն այդ դաշինքի չափանիշներին, այլև Անկարայի հիմնական դերակատարմանը Սառը պատերազմի շրջանում՝ դեպի Մերձավոր Արևելք և նեղուցներ ԽՍՀՄ առաջխաղացման զսպմանը: Այդ առումով խորհրդանշական է նաև 1956թ. Թուրքիայում 15 միջուկային մարտագլխիկներով «Յուպիտեր» հրթիռների տեղադրումը[14]:

Ակնհայտ էր, որ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ձևավորված միանգամայն նոր իրավիճակում Թուրքիան ստացավ գայթակղիչ հեռանկարներ, բայց նաև բախվեց նոր մարտահրավերների: Հեռանկարների իրագործման և մարտահրավերների հաղթահարման համար պահանջվում էր ձևավորել ներքին և արտաքին քաղաքականությունների նոր մոդել[15], քանի որ մինչ այդ մի քանի տասնամյակի ընթացքում ԽՍՀՄ-ի առաջխաղացումը և Մերձավոր Արևելքի անցանկալի զարգացումները զսպող՝ Արևմուտքի համար ցանկալի դերակատարությունն ու դրա օգտագործումն ի նպաստ սեփական շահերի, այլևս սպառել էր իրեն: Արտաքին հարաբերությունների տիրույթում պետք էր պահպանել կարևորությունը Սառը պատերազմի հաղթողի՝ Արևմուտքի պլանների իրագործման տեսակետից, բայց, միաժամանակ, հասնել սեփական հիմնական խնդիրների լուծմանը՝ ազդեցիկության էական բարելավում

[14] **Kösebalaban, H.** Turkish foreign policy: Islam, nationalism, and globalization. New York: Palgrave Macmillan, 2011, p. 75.
[15] **Torosyan, Vardanyan**, նշվ. աշխ.

տարածաշրջանում, քրդական խնդրի լուծում, ներքաղաքական կայունության ապահովում: Կար ևս մեկ խնդիր՝ անդամակցությունը Եվրամիությանը, որի լուծմանն ուղղված ժողովրդավարացման քայլերի համադրումը իսլամի հետ և միջտարածաշրջանային կենտրոնական դիրքը Եվրասիական կենտրոնում կարևոր նախադրյալներ էին նոր աշխարհակարգի ձևավորման գործընթացում շահավետ մասնակցության համար: Պատահական չէ, որ նման առաքելության նախաձեռնությունը 1991թ. եկավ այդ գործընթացի գլխավոր դերակատարից՝ Միացյալ Նահանգներից[16], երբ ամերիկյան լրատվամիջոցները շրջանառության մեջ դրեցին «թուրքական մոդելի» գաղափարը: Ըստ դրա, նախկին ԽՍՀՄ տարածքի մուսուլմանական երկրների արդիականացման առաջնորդությունը պետք է ստանձներ Թուրքիան՝ իր փորձի հիման վրա: Թեև այդ շրջանի թուրքական քաղաքական վերնախավը՝ Թ. Օզալ, Ս. Դեմիրել, Թ. Չիլեր, Ն. Էրբաքան, ոգևորված էր այդ գաղափարով[17] և փորձեց այն կենսագործել, սակայն անհաջողության մատնվեց՝ անհրաժեշտ քաղաքական, տնտեսական, ֆինանսական և այլ միջոցների ու ներքաղաքական կայունության բացակայության պատճառով: Անկայունությունն ավելի խորացավ 1994թ. խորը ֆինանսական ճգնաժամի և 1997թ. ռազմական հեղաշրջման պատճառով՝ վերջակետ դնելով հետխորհրդային մուսուլմանական երկրներում «թուրքական մոդելի» կիրառման հույսերին[18]: Հետագայում, երբ 2002թ. իշխանության եկավ «Արդարություն և զարգացում» կուսակցությունը, նոր կառավարությանը հաջողվեց հաստատել տնական կայունություն, չեզոքացնել զինվորականների ազդեցությունը ներքաղաքական կյանքի վրա և ճկուն արձագանքել մարտահրավերներին: Թեև Միացյալ Նահանգները երկու անգամ

---

[16] **Dal and Erşen**, նշվ. աշխ.

[17] **Ozal T.** 1992. Turkish model for Asian republics. *Baltimore Sun.* 1992, 16.01. http://articles.baltimoresun.com/1992-01- 16/news/1992016166_1_situation-in-iraq-gulf-war-embargo-against-iraq; Demirel, S. The Compatibility of Islam, Democracy and Secularism. *Perceptions: Journal of International Affairs,* 1997, **2**, 2. http://sam.gov.tr/wp-content/uploads/2012/02/SuleymanDemirel1. pdf

[18] **Winrow,** նշվ. աշխ.

(2001թ. սեպտեմբերի 11-ից հետո իրականացված հակաահաբեկչական գործողությունների, ինչպես նաև, ավելի ուշ, «արաբական գարունի» կապակցությամբ) փորձեցին վերակենդանացնել «թուրքական մոդելի» գաղափարն՝ այս անգամ Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում կիրառելու նպատակով[19], սակայն դրանք ևս հաջողություն չունեցան[20], քանի որ թուրքական իշխանություններն այլևս դրանով ոգևորված չէին: Արտաքին գործերի նախարար Ա. Դավութօղլուն, խոսելով «թուրքական մոդելի» մասին, հայտարարում էր. «Մենք չենք ցանկանում, որ Թուրքիան՝ որպես երկիր, կամ ԱՀԿ-ն՝ որպես կուսակցություն, դառնան մոդելներ որևէ մեկի համար: Մեր քաղաքականությունը բխում է մեր երկրի և քաղաքացիների շահերից և մոդելների ստեղծման նպատակ չունի: Մենք չենք կարող որևէ մեկին մոդել պարտադրել, քանի որ յուրաքանչյուր երկիր ունի զարգացման իր ուղին»[21]: Առավել ևս, որ հավանաբար երկբևեռ աշխարհակարգի փլուզման ուժեղ ազդեցության ներքո Թուրքիայի ակադեմիական շրջանակները միասնական էին արտաքին քաղաքականության տեսական հիմքերի առնչությամբ: Դրանք կառուցված են արևմտյան հեղինակների դասական աշխարհաքաղաքական մոտեցումների, հատկապես Հ. Մաքինդերի Եվրասիական կենտրոնի գաղափարի նմանությամբ:[22] Սկսած ակնառու նմանակումից՝ Ռ. Օզեյի «Թյուրքական աշխարհը

---

[19] **Altunişik M. B.** The Turkish Model and Democratization in the Middle East. *Arab Studies Quarterly,* 2005, Vol. **27**, 1/2, 45-63; **İdiz**, նշվ. աշխ.

[20] **Taspinar O.** The End of the Turkish Model, *Survival: Global Politics and Strategy*, 2014, **56**, 2, 49-64, DOI: 10.1080/00396338.2014.901732; **Tuğal C.** The Fall of the Turkish Model: How The Arab Uprisings Brought Down Islamic Liberalism. Verso Books. 2016.

[21] **Davutoğlu A.** We in Turkey and the Middle East have replaced humiliation with dignity. *The Guardian.* 2011. 15.03. http://www.guardian.co.uk/commentisfree/2011/mar/15/middle-east-digni ty-common-destiny.

[22] **Թորոսյան Տ., Արշակյան Գ.** Թուրքիայի արդի արտաքին քաղաքականության ձավորման նախադրյալները, մարտահրավերներն ու հեռանկարները, *Հայկական քաղաքագիտական հանդես,* 2014թ., 2, 141-162, DOI: 10.19266/1829-4286-2014-02-141-162

համաշխարհային թատերաբեմում» մենագրությունից[23] ու նրա մշակած «Թուրքերի կենտրոնական գերիշխանության» հայեցակարգից, որի համաձայն «Անատոլիան հանդիսանում է «Աշխարհի ամրոցը», ուստի Թուրքիան, տիրապետելով Անատոլիան, հնարավորություն է ստանում վերահսկելու Բալկաններն ու Եվրասիան», մինչև Ա. Դավութօղլուի «Ռազմավարական խորություն» տեսությունը[24], որը հետագայում հռչակվեց պաշտոնական Անկարայի արտաքին քաղաքականության տեսական հիմք: Այդ տեսության համաձայն Թուրքիան պետք է ակտիվ դերակատարում ունենա Օսմանյան կայսրության նախկին տարածքում: Դավութօղլուն համարում էր, որ. «վերջին տասնամյակում Թուրքիան իզուր հսկայական ջանքեր և ժամանակ է վատնել հարևանների հետ հակամարտությունների պատճառով: Որպեսզի Թուրքիան կարողանա դառնալ տարածաշրջանային առաջնորդ և ձեռք բերի գլոբալ ռազմավարական նշանակություն, պետք է ջերմ հարաբերություններ հաստատի իր հարևանների հետ»[25]: Այդ նպատակով Ա. Դավութօղլուն առաջարկում էր քաղաքականությունը կառուցել հետևյալ հինգ սկզբունքների հիման վրա. 1. ժողովրդավարության և անվտանգության միջև հավասարակշռության պահպանում; 2. «զրո խնդիրներ հարևանների հետ» քաղաքականության որդեգրում՝ նկատի ունենալով հարևանների հետ առկա վեճերի լուծման և բարիդրացիական հարաբերությունների հաստատման անհրաժեշտությունը; 3. հարևան տարածաշրջաններում զարգացող և ամուր հարաբերությունների հաստատում, տարածաշրջանային և գլոբալ մակարդակով տնտեսական փոխգործակցության հաստատման և զարգացման անհրաժեշտություն; 4. բազմակողմ արտաքին քաղաքականության իրականացում; 5. «փափուկ ուժ»-ի քաղաքականության որդեգրում:[26] Այդ ամենի վերջնական նպատակն էր Թուրքիան

---

[23] **Özey R.** Dünya Platformunda Türk dünyası, Istanbul, 1999, 22-23.
[24] **Davutoğlu A.** Stratejik Derinlik: Türkiyenin Uluslararası Konumu, Istanbul. 2001.
[25] **Davutoğlu A.** 2001, նշվ. աշխ., էջ 118.
[26] **Davutoğlu A.** Turkey's Foreign Policy Vision: An Assessment of 2007, *Insight Turkey*, 2008, **10**, 1, 79-83.

դարձնել համաշխարհային քաղաքական դերակատար:[27] Այս սկզբունքների հիմքում Դավութօղլուի համոզմունքն էր, որ Թուրքիան ունի բազմակողմ արտաքին քաղաքականություն վարելու բոլոր հնարավորությունները[28], և կարիք ունի որդեգրելու ավելի հավասարակշռված դիրքորոշում՝ ԱՄՆ-ին անվերապահ աջակցելու փոխարեն[29]: Վերջին պնդումը կարող էր ընկալվել սոսկ որպես քարոզչական քայլ, սակայն իրադարձությունների զարգացմանն ուշադիր հետևելու դեպքում կարելի է նկատել այդ ուղղությամբ արված մի շարք քայլեր: Մասնավորապես, թեև Անկարան Հարավային Կովկասում ընթացող աշխարհաքաղաքական մրցակցության մեջ էական դերակատարություն չի ունեցել, սակայն փորձել է ակտիվությամբ օգուտներ քաղել զարգացումներից: 2008թ. Թուրքիան ռուս-վրացական Հնգօրյա պատերազմի մասնակից չէր, սակայն պատերազմի ընթացքում և անմիջապես հետո աչքի ընկավ այնպիսի ակտիվ քայլերով, որոնք բազմակողմ արտաքին քաղաքականություն վարելու նախանշաններ էին: Նախ, Հնգօրյա պատերազմի ընթացքում Թուրքիան թույլ չտվեց ամերիկյան ռազմանավերին իր վերահսկողության տակ գտնվող նեղուցներով օգնություն հասցնել ԱՄՆ անվերապահ աջակցությունը վայելող Վրաստանին[30], ապա, հրադադարից մի քանի օր անց Մոսկվա այցելած Թուրքիայի վարչապետ Ռ. Թ. Էրդողանն առաջարկեց ստեղծել «Կովկասի կայունության և համագործակցության պլատֆորմ»՝ հարավկովկասյան երկրների, ինչպես նաև ՌԴ-ի և Թուրքիայի մասնակցությամբ[31]: Ընդ որում, ոչ միայն

[27] **Joshua W.** Turkey's Imperial Legacy: Understanding Contemporary Turkey through its Ottoman Past, *Perspectives on Global Development and Technology*, 2009, **8**, 2-3, 498-505.

[28] **Davutoğlu**. 2001. Նշվ. աշխ., էջ 119.

[29] **Davutoğlu** 2008, նշվ. աշխ.

[30] **Aras B.** Turkey and the Russian Federation: An Emerging Multidimensional Partnership, SETA Policy Brief, 2009, 35, p. 8; **Morrison D.** Turkey restricts US access to the Black Sea, 2008. 18.10.2008.

[31] **Devrim D., Schulz E.** The Caucasus: Which Role for Turkey in the European Neighborhood?, *Insight Turkey*, 2009, **11**, 3, 177-193; **Torosyan T., Arshakyan G.** 2017. Geopolitical Aspect of Russian-Turkish Relations: Rivalry or Cooperation?

չնախատեսելով դրանում Վաշինգտոնի մասնակցությունն, այլև առանց այդ հարցը Միացյալ Նահանգների հետ նախապես քննարկելու: ՌԴ-ԱՄՆ աշխարհաքաղաքական պայքարում Մոսկվայի օգտին Անկարայի երրորդ, ավելի տպավորիչ ընտրությունը տեղի ունեցավ այդ պայքարի ամենաթեժ ժամանակահատվածում՝ 2014թ. վերջին: Ուկրաինայում իրավի-ճակի կտրուկ սրումից, ապա զինված բախումներ սկսվելուց հետո ԵՄ-ն, Միացյալ Նահանգների կոշտ ճնշումների ներքո, սկսեց պատժամիջոցներ կիրառել Ռուսաստանի նկատմամբ:[32] Փորձեր էին արվում դրանում ներգրավելու նաև Անկարային, սակայն արտաքին գործերի նախարար Մ. Չավուշօղլուն նշել էր, որ Թուրքիան չի ցանկանում միանալ Ռուսաստանի դեմ ԵՄ պատժա-միջոցներին՝ ընդգծելով, որ Մոսկվան Թուրքիայի կարևոր առևտրա-յին գործընկեր է: Նա նաև ԵՄ երկրներին կոչ էր արել լինել «իրատես», փորձել հասկանալ, թե ինչ կարող են անել առանց ռուսական գազի՝ նշելով, որ «յուրաքանչյուր երկիր պետք է հաշվի առնի սեփական շահերը»[33]: Ավելի անկեղծ էր Թուրքիայի ֆինանս-ների նախարար Ն. Զեյբեքչիի գնահատականը. «Մոսկվայի, ԱՄՆ-ի և ԵՄ-ի միջև ներկայիս ճգնաժամը հնարավորություն է Անկարայի համար»:[34]

Հավանաբար Բրյուսելի կարծիքով ամենաազդեցիկ քայլը անդամ երկրներին ստիպելն էր դուրս գալ ռուսական գազը Ուկրաինան շրջանցող երթուղով Եվրոպա տեղափոխելու համար նախատեսված ռուսական «Հարավային հոսք» գազատարի կառուցման ծրագրից: Սկզբում, երբ հունիսին Բուլղարիան հայտա-

---

Armenian Journal of Poltical Science, 2017, 1, 5-28. DOI: 10.19266/1829-4286-2017-01-5-28.

[32] **Թորոսյան Տ., Արշակյան Գ.,** 2014թ., նշվ. աշխ.; Turkey Refuses to Join Anti-Russia EU Sanctions for Economic Reasons, Sputnik news. 11.02.2015, http://sputniknews.com/politics/20150211/1018132862.html.

[33] Նույն տեղում

[34] **Michalopoulos S**. Greece accuses Turkey of exploiting Russian EU Food Ban, 11.08.2014, http://www.euractiv.com/section/agriculture-food/news/greece-accusesturkey-of-exploiting-russian-eu-food-ban.

բարեց, որ դուրս է գալիս ծրագրից (այդ երկրի տարածքով պետք է անցներ գազատարի եվրոպական հատվածի սկզբնամասը), թվաց, թե Մոսկվան հայտնվել է անելանելի իրավիճակում, քանի որ մեծ էին լինելու և տնտեսական կորուստները՝ ծրագրի նախապատրաստման համար ծախսվել էին տարիներ ու զգալի ֆինանսական միջոցներ, և քաղաքական կորուստները, քանի որ Ուկրաինայի հետ կապված խնդրում Ռուսաստանը զրկվելու էր շատ կարևոր լծակից: Այդուհանդերձ, Ռուսաստանի նախագահ Վ. Պուտինը 2014թ. վերջին, Անկարա կատարած այցի ժամանակ հրապարակեց բարդ խնդրի հանգուցալուծման Մոսկվայի սրամիտ, աշխարհաքաղաքական ծանրակշիռ նշանակություն ունեցող լուծումը: Ռուսաստանի նախագահը հայտարարեց, որ Ռուսաստանը փակում է «Հարավային հոսք» ծրագիրը և սկսում է իրագործել մեկ այլ՝ «Թուրքական հոսք» ծրագիր[35]: Իհարկե, դա բոլորովին նոր ծրագիր չէր, քանի որ առաջարկվում էր «Հարավային հոսքով» տեղափոխելու համար նախատեսված ամբողջ գազը (63 մլրդ խորանարդ մետր) նույն ճանապարհի սկզբնական հատվածով՝ Սև ծովի հատակով անցնող գազատարով, տեղափոխել և վաճառել Թուրքիային: Եվրոպան ստիպված կլինի այդ գազը գնել Անկարայից, քանի որ Ռուսաստանն այլ բան չի առաջարկելու իր գազի պաշարների զգալի մասը Մոսկվայից գնող եվրոպական երկրներին, միաժամանակ, Թուրքիայից գազը չգնելու լուրջ հիմնավորում չի լինելու:

Այսպիսով, 2008թ. ռուս-վրացական պատերազմից հետո դիտարկվող տարածաշրջաններում կատարված որևէ էական իրադարձության առնչությամբ Թուրքիան Միացյալ Նահանգների դիրքորոշումը չի պաշտպանել, մինչդեռ առնվազն չորս վերոհիշյալ դեպքերում դիրքորոշումը շահեկան է եղել պաշտոնական Մոսկվայի համար: Եթե առաջին նման փորձերը՝ հաշվի առնելով

[35] **Bierman S., Arkhipov I., Mazneva E.** Putin Scraps South Stream Gas Pipeline after EU Pressure, Bloomberg, 02.12.2014. http://www.bloomberg.com/news/201412-01/putin-halts-south-stream-gas-pipeline-after-pressure-from-eu. html.

դրանց ոչ մեծ և ժամանակավոր հետևանքները, կարող էին և Միացյալ Նահանգների կոշտ արձագանքին չարժանանալ, ապա «Թուրքական հոսքի» դեպքը միանգամայն այլ է: Նախագծի իրականացմանը մասնակցելուց հրաժարվելու ճնշումներն ուղղված էին ոչ միայն Թուրքիային, այլև Հունաստանին ու Մակեդոնիային, սակայն այդ երկրների կառավարությունները չընկրկեցին:[36] Անսպասելիորեն առաջացավ մեկ այլ վտանգ: 2015թ. Թուրքիայի ռազմաօդային ուժերը Սիրիայի հետ սահմանի մոտակայքում խոցեցին ռուսական SU-24 ռմբակոծիչը[37]՝ լուրջ ճգնաժամ առաջացնելով ռուս-թուրքական հարաբերություններում[38]: Ռուսաստանը պատժամիջոցներ սահմանեց Թուրքիայի նկատմամբ և դադարեցվեցին աշխատանքներն աննախադեպ հեռանկարներ խոստացող «Թուրքական հոսք» ծրագրի պայմանագրի ստորագրման ուղղությամբ: Սակայն Թուրքիայի խնդիրները միայն Ռուսաստանի պատժամիջոցներով չէին սահմանափակվում: Ըստ Ա. Այդընթաշբաշի, Էրդողանը հայտնվել էր դիվանագիտական առումով մեկուսացված վիճակում: Թուրքիան վերջին տարիներին չէր կարողանում ձերբազատվել մեկուսացվածության զգացումից, քանի որ նրա «զրո խնդիր հարևանների հետ» քաղաքականությունն իսկապես փոխել էր իրավիճակը՝ չէր մնացել որևէ հարևան, որի հետ չլինեն խնդիրներ:[39] Բազմաթիվ և տարավեկտոր բարդ գործընթացներում ներգրավվելով՝ Թուրքիան զգալիորեն մեծացրել էր անհաջողության վտանգը: Առավել ևս, որ ըստ Դ. Ֆիլիպսի, «Բարդ խնդրի բախվելով՝ Անկարան հազվադեպ է լավ համակարգված ռազմավարության ունակություն և հեռատեսու-

---

[36] **Torosyan and Arshakyan** 2017, նշվ. աշխ.

[37] **Shaheen K. and Walker S.** Putin condemns Turkey after Russian warplane downed near Syria border, *The Guardian*, 24.11.2015, https://www.theguardian.com/world/2015/nov/24/turkey-shoots-down-jet-nearborder-with-syria.

[38] **Torosyan and Arshakyan** 2017, նշվ. աշխ.

[39] **Tavernise S.** Seeking to Improve Ties With Russia, Turkey Apologizes for Downing Warplane, *The New York Times,* 27.06.2016, http://www.nytimes.com/2016/06/28/world/europe/russia-turkey-erdoganputin.html?_r=0.

թյուն ցուցաբերում: Թուրքերը լավ վարչարարներ են, երբ հարցը վերաբերում է ամենօրյա գործերին, սակայն տեսլական և ճկունություն պահանջող նախաձեռնողական նուրբ քաղաքականություն մշակելու հարցում նվազ ունակ են»:[40]

Կուտակված լուրջ խնդիրները՝ երկրում առկա քաղաքական և տնտեսական բարդ իրավիճակը, փախստականների հիմնախնդիրների, ինչպես նաև էներգետիկայի ոլորտում Ռուսաստանի հետ հավակնոտ ծրագրերի պատճառով ԱՄՆ-ի և ԵՄ-ի հետ հարաբերությունների վատթարացումը, վեց տարվա դիվանագիտական մրցակցությունից հետո Իսրայելի հետ պարտադրված հաշտեցման գործընթացը, «նեոօսմանիզմի» քաղաքականության տապալումը և Ուկրաինայի միջոցով Սև ծովում Ռուսաստանին այլընտրանք ստեղծելու փորձի ձախողումը իրավիճակը դարձրել էին խիստ վտանգավոր:[41] Հաշվի առնելով Թուրքիայի առջև ծառացած բարդ մարտահրավերների հնարավոր ծանր հետևանքները, նախագահ Ռ. Թ. Էրդողանը նամակով ներողություն խնդրեց Ռուսաստանից[42] և 7-ամսյա ճգնաժամը հաղթահարվեց: Կարելի է պնդել, որ դա տեսանելի ապագայի համար շրջադարձային նշանակության որոշում էր՝ Թուրքիայի աշխարհաքաղաքական կողմնորոշումների առումով: Հետագա զարգացումները հստակ ուղղվածություն ունեին. մի կողմից ավելի ու ավելի էին խորանում ռուս-թուրքական հարաբերությունները, մյուս կողմից մեծանում էին ճնշումները Միացյալ Նահանգների և ԵՄ կողմից: Արձագանքները 2016թ. հուլիսի 15-ին տեղի ունեցած հեղաշրջման ձախողված փորձին շատ խորհրդանշական էին: Եթե Ռուսաստանն իր զորակցությունը հայտնեց Էրդողանին, ապա Արևմուտքը խորացող բացասական արձագանք ունեցավ վերջինիս պատժիչ գործողությունների նկատմամբ՝ 6000 ձերբակալվածներ, սյլախոհ գործիչների ու

[40] **Philips D. L.** Unsilencing the Past: Track Two Diplomacy and Turkish-Armenian Reconciliation, Oxford, Berghahn Books. 2005.
[41] **Torosyan and Arshakyan** 2015, նշվ. աշխ.
[42] **Kravchenko S.** Kremlin Says Erdogan Apologized for Turkey Shooting Down Jet, 27.06.2016, http://www.bloomberg.com/news/articles/2016-06-27/kremlin-sayserdogan-apologized-for-turkey-shooting-down-bomber.

լրագրողների հալածանքներ, անգամ՝ մահապատիժը վերականգնելու սպառնալիքներ:[43] Սակայն դա չթուլացրեց Թուրքիայի նախագահի վճռականությունը: Մի քանի շաբաթ անց տեղի ունեցավ Էրդողանի այցը Ռուսաստան, ինչը լրջորեն անհանգստացրեց Արևմուտքին[44], իսկ երկու ամիս անց ստորագրվեց ռուս-թուրքական համաձայնագիրը «Թուրքական հոսք»-ի կառուցման վերաբերյալ: ԱՄՆ-ի ճնշումներն՝ այն թույլ չտալու նպատակով, ոչ միայն հաջողություն չունեցան ու 2020թ. հունվարին գազամուղը գործարկվեց, այլև այդ ընթացքում իրականացվեցին մի քանի գործարքներ, որոնք ավելի ամրապնդեցին ռուս-թուրքական համագործակցությունը: Դրանք հատկապես ազդեցիկ էին ռազմաքաղաքական ոլորտում: 2017թ. վերջին Անկարան ստորագրեց ռուսական S-400 հակաօդային պաշտպանության համակարգերի ձեռքբերման պայմանագիր, որի ազդեցությունը Միացյալ Նահանգների ու ՆԱՏՕ-ի հետ Թուրքիայի հարաբերությունների վրա կարելի է գնահատել ճգնաժամային: Էրդողանը ոչ ընկրկեց ամերիկյան սպառնալիքների առաջ (Անկարային ամերիկյան F-35 կործանիչների ծրագրից հեռացնելուց[45] մինչև թուրքական տնտեսության ջախջախում[46]) ոչ էլ գայթակղվեց ամերիկյան Patriot համակարգի ձեռքբերման առաջարկով: Ավելին, նա Մոսկվայի հետ քննարկեց ռուսական SU-35 կործանիչների ձեռքբերման և հաջորդ սերնդի SU-

---

[43] **Bodkin H., Millward D., Ensor J., Rothwell J.** 2016.Turkey coup attempt: World leaders warn President Erdogan not to use uprising as excuse for crackdown as more than 6,000 arrested, The Telegraph, 18.07.2016, http://www.telegraph.co.uk/news/2016/07/17/turkey-coup-plot-president-erdoganrounds-up-thousands-of-soldie/.

[44] **MacFarquhar N.** Russia and Turkey Vow to Repair Ties as West Watches Nervously, *The New York Times,* 09.08.2016, http://www.nytimes.com/2016/08/10/world/europe/putin-erdogan-russia-turkey.html

[45] **Episkopos M.** Could Turkey Lose the F-35 Stealth Fighter and Pass on Russia's Su-57?, *The National Interest,* 17.09.2019, https://nationalinterest.org/blog/buzz/could-turkey-lose-f-35-stealth-fighter-and-pass-russias-su-57-81321.

[46] **Gaouette N.** As Trump threatens to destroy Turkey's economy and Kurds die, many wonder if penalties will have teeth, *CNN,* 150.10.2019, https://edition.cnn.com/2019/10/14/politics/trump-turkey-sanctions-skepticism/index.html.

57 օդանավերի ծրագրի շրջանակներում համագործակցության հարցը:[47] Ակնհայտ է Էրդողանի մարտավարությունը՝ ամերիկյան յուրաքանչյուր պատժամիջոցի հետևում է նոր քայլ ռուսների հետ մերձեցման ուղղությամբ, որն ավելի ու ավելի է իրավիճակը մոտեցնում անշրջելիության կետին: Առավել ևս, որ առկա են դրան տանող ևս երկու բաղադրիչներ: Թուրքիան՝ հեռանալով Սիրիայում ամերիկյան քաղաքականության իրագործման գործընթացից, Ռուսաստանի և Իրանի հետ մասնակցում է 2017թ. հունվարին սկսված Աստանայի գործընթացին, որը նպատակ ունի հասնել Սիրիայում պատերազմի շուտափույթ ավարտին: Շատերը[48] համարում են, որ դեպի Ռուսաստան Անկարայի դրեյֆի հիմնական պատճառը քրդական գործոնն է: Սիրիական ճգնաժամի մեկնարկից ի վեր Անկարայի և Վաշինգտոնի մոտեցումներն արմատապես տարբերվում են հատկապես սիրիական քրդերի վերաբերյալ: Միացյալ Նահանգների հիմնական խնդիրը Սիրիայում Իսլամական պետությունից (ԻՊ) բխող վտանգների չեզոքացումն էր, որի գործողությունների կարևոր ասպարեզ էին Սիրիայի քրդաբնակ տարածքները: ԻՊ-ի դեմ, ըստ ԱՄՆ պաշտպանության նախարար Է. Քարտերի, Սիրիայի քրդերն ամենաշահագրգիռ ուժն են աշխարհում[49]: Ճիշտ է, ԻՊ-ին դիմակայելու նպատակով Միացյալ Նահանգները 2014թ. հունիսին մի քանի տասնյակ երկրների մասնակցությամբ կոալիցիա ձևավորեց, սակայն նրանց մասնակցությունը տեխնիկական է և քաղաքական, մինչդեռ խնդրի լուծումն անհնարին էր առանց ռազմական գործողությունների և դրանք

[47] Tétrault-Farber G. 2019. Erdogan says Turkey wants to continue defense cooperation with Russia, *Reuters,* 27.08.2019, https://www.reuters.com/article/us-russia-turkey-planes/erdogan-says-turkey-wants-to-continue-defense-cooperation-with-russia-idUSKCN1VH1QS.

[48] **Đidić A. and Kösebalaban H.** Turkey's Rapprochement with Russia: Assertive Bandwagoning, *The International Spectator*, 2019, **54**, 3, 123-138. DOI: 10.1080/03932729.2019.1627070; **Friedman G.** The Origins of New US-Turkish Relations. October 14, 2019. https://geopoliticalfutures.com/the-origins-of-new-us-turkish-relations/; Shlykov P. 2019, նշվ. աշխ.

[49] **Rosen J.** Kurdish militia proving to be reliable partner against Islamic State in Syria. *Miami Herald*, 6 July, 2015. https://www.miamiherald.com/news/nation-world/world/arti cle26614369.html.

իրականացնող տարածաշրջանային զինված ուժերի: Վաշինգտոնն ընտրության մեծ հնարավորություն չուներ, քանի որ Թուրքիան կոալիցիային միացավ մեկ տարի ուշացումով և խուսափում էր ԻՊ-ի հետ ուղղակի բախումներից: Հիմնականում քրդաբնակ սահմանամերձ Քոբանի քաղաքի պաշտպանությունը ցույց տվեց, որ կոալիցիայի օդուժի աջակցությամբ գործող քրդական ուժերը ունակ են հիմնական հարվածային ուժի դերակատարությունը ստանձնելու: Այդ պատճառով սիրիական ճգնաժամի հաղթահարման հարցում Վաշինգտոնը որպես հիմնական դաշնակից ընտրեց սիրիական քրդերին, որոնց առաջնորդում են Քրդստանի աշխատավորական կուսակցության հետ սերտորեն համագործակցող Ժողովրդական ինքնապաշտպանական ուժերը (ԺԻՈՒ): Ամերիկյան ռազմական աջակցությունը Սիրիայի քրդերին իրականացվում է այդ կազմակերպության միջոցով, որը մտադրություն ունի թուրք-սիրիական սահմանի երկայնքով ձևավորել քրդական ինքնավարություն: Մինչդեռ Անկարան համարում է, որ երկրի անվտանգության ամենամեծ սպառնալիքը հենց քրդական ինքնիշխանության ձգտումներն են ու Թուրքիայի, Սիրիայի և Իրաքի քրդերի համախմբումը: Միացյալ Նահանգները չեն արձագանքում Անկարայի այդ մտավախություններին և որևէ ձևով չեն վերանայել հարաբերությունները ԺԻՈՒ-ի հետ: Սիրիական քրդերի հետ ԱՄՆ լայնածավալ համագործակցության յուրահատուկ պատասխան եղավ թուրքական մամուլում հրապարակումը, թե Սիրիայի տարածքում որտեղ են տեղադրված ամերիկյան ռազմական հենակետերը[50]: Լարվածությունն ավելի մեծացրեցին 2017թ. սեպտեմբերին Իրաքի Քրդստանում անկախության հանրաքվեի անցկացումն ու ԺԻՈՒ-ի հաջողությունները:[51] Հայտարարելով, որ պետք է չեզոքացնի Սիրիայի հետ սահմանակից զոտում ձևավորվող քրդական վտանգը 2019թ. հոկտեմբերին թուրքական զինված

[50] Suriye'de 10 noktada PKK/PYD'ye ABD desteği. *Anadolu Ajansi*. Istanbul, 2017.17.07. https://www.aa.com.tr/tr/dunya/ suriyede-10-noktada-pkk-pydye-abd-destegi/863161.

[51] **Shlykov** 2019, նշվ. աշխ.

ուժերը ներխուժեցին հարևան երկրի տարածք՝ իրականացնելու համար «Խաղաղության ակունք» գործողությունը: Միջազգային հանրությունն անմիջապես դատապարտեց Անկարայի գործողությունները[52] և կրկին բարդ իրավիճակից Թուրքիան կարողացավ դուրս գալ Ռուսաստանի օգնությամբ: Պուտինը Էրդողանին հրավիրեց Սոչի, իրավիճակի հանգուցալուծման վերաբերյալ կնքվեց հուշագիր, որն ընդունելի եղավ նաև մյուս շահագրգիռ կողմերի համար:[53] Դա արդեն վկայում էր, որ առկա է ոչ թե ընդհանուր ուղղություն ունեցող իրավիճակային լուծումների պատահական համընկում, այլ ուժերի լուրջ վերադասավորման միտումներ:

Ըստ Դիդիչի և Քյոսեբալաբանի, Ռուսաստանի հետ 2016թ. հետո ձևավորված հարաբերությունները հակասում են «վերջին երկու հարյուր տարիներին Օսմանյան կայսրության և Թուրքիայի մեծ ռազմավարությանը, որի համաձայն դիմակայել են Ռուսաստանի ճնշումներին և ձգտել են արևմտյան տերությունների հետ դաշինքների»:[54] Ռուսաստանի հետ Թուրքիայի ներկայիս մերձեցումը նրանք բացատրում են այն հանգամանքով, որ Թուրքիայի իշխանությունները քրդական վտանգները համարում են ավելի մեծ և անմիջական, քան Ռուսաստանից եկող վտանգներն, ու երբ Միացյալ Նահանգները դադարեցնի աջակցությունը սիրիական քրդերին, Թուրքիան կվերադառնա արևմտամետ կողմնորոշմանը: Նույն կարծիքին է նաև Ջ. Ֆրիդմանը: Նա պնդում է, որ նախագահ Դ. Թրամփը հստակ զգում է, որ Թուրքիան որոշիչ նշանակություն ունի և վերջինիս գործողությունները Սիրիայում կհանգեցնեն Էրդողանի այցին Վաշինգտոն և տարածաշրջանում տեղի կունենան վերադասավորումներ:[55] Սակայն չպետք է մոռանալ, որ հարյուր տարի առաջ Ռուսական և Օսմանյան կայսրությունների գրեթե միաժամանակյա փլուզումից հետո Ռուսաստանն ու Թուրքիան

[52] **Bodkin H., Millward D., Ensor J., Rothwell J.,** նշվ. աշխ.
[53] **Johny S.** Putin takes centre stage in Syria, *The Hindu,* 25.10.2019, https://www.thehindu.com/opinion/op-ed/putin-takes-centre-stage-in-syria/article29789785.ece.
[54] **Đidić and Hasan Kösebalaban**, նշվ. աշխ.
[55] **Friedman**, նշվ. աշխ.

հայտնվել էին շատ նման իրավիճակում և միասին հաղթահարեցին այն: Ինչ վերաբերում է նոր վերադասավորումներին, ապա 2016-ից հետո մի շարք առանցքային ուղղություններով (քաղաքական, ռազմական, էներգետիկ և այլն) այնպիսի խոշոր փոփոխություններ են տեղի ունեցել, որ տեսանելի ապագայում դժվար է պատկերացնել այդ ամբողջի վերանայումը: Առավել ևս, որ հարաբերությունների լուրջ վատթարացումն արձանագրվել է ոչ միայն Վաշինգտոնի, այլև Եվրոպայի հետ:

Խոսքը միայն առանձին երկրների կամ բարձրաստիճան պաշտոնյաների հայտարարությունների մասին չէ, ինչպես, օրինակ, Բունդեսթագի նախագահ Ն. Լամերթի ելույթն էր 2017թ. մարտի 27-ին Գերմանիայի Բունդեսթագում կազմակերպված «Quo vadis. Գերմանիա-Թուրքիա» թեմայով համաժողովում. «Այն, ինչ այսօր տեղի է ունենում Թուրքիայում, ոչ թե իրադարձությունների բնականոն ընթացք է, այլ նախապես հաշվարկված պլան: Երկրում, որը ՆԱՏՕ-ի անդամ է և հավակնում է ԵՄ անդամ դառնալ, ոտնահարվում են քաղաքացիական իրավունքները, ժողովրդի կողմից ընտրված պատգամավորները ձերբակալվում են: Թուրքիայում ամառվանից մինչ օրս կարելի է խոսել երկու հեղաշրջման մասին: Առաջինը պետական հեղաշրջում էր, որը տապալվեց, իսկ երկրորդը կազմակերպել է Էրդողանը՝ սեփական երկրի սահմանադրության դեմ: Եվ այս մեկն արդեն հաջողված է թվում: Էրդողանը փաստացի լուծարում է խորհրդարանը՝ ձերբակալելով պատգամավորներին: Նա դա անում է հանրաքվեի միջոցով, որը ուժազրկում է ժողովրդի կողմից ընտրված խորհրդարանը... Հավանաբար երկար ժամանակ նախապատրաստված սցենարի հիման վրա նախագահ Էրդողանն ու իր ԱԶԿ-ի կառավարությունը նախատեսում են անկայուն, սակայն ժողովրդավարական կարգուկանոնը վերափոխել ամբողջատիրական համակարգի»:[56]

[56] Bundestagspräsident Norbert Lammert: „Zweiter Putschversuch droht erfolgreich zu sein“, https://www.youtube.com/watch?v=h_bSXpY7Ueo. 2017

Իրադարձությունների զարգացումը վկայում է, որ թուրք-եվրոպական բարդությունները ոչ միայն չեն թուլանում, այլև ստանում են ինստիտուցիոնալ բնույթ՝ երկկողմ հարաբերություններից տեղափոխվելով եվրոպական կառույցներ: 2017թ. ապրիլին Եվրոպայի խորհուրդը վերականգնեց 2004 թվականին դադարեցված մշտադիտարկման գործընթացը Թուրքիայի նկատմամբ՝ որպես պատասխան սահմանադրական փոփոխություն-ների:[57] Ավելի բարվոք չեն հարաբերությունները Եվրամիության հետ: Այն բանից հետո, երբ 2013թ. սկսած Թուրքիան սկսեց հեռանալ ԵՄ անդամակցության չափանիշներից[58] և 2016թ. Էրդողանի դեմ զինված հեղաշրջման փորձից հետո հարաբերությունները հասան ցածրակետին, իսկ նույն թվականի նոյեմբերին Եվրախորհրդարանը քվեարկեց անդամակցության բանակցություններն ընդհատելու օգտին[59], որևէ մեկը լուրջ չի համարում այդ գործընթացի վերսկսումն առնվազն տեսանելի ապագայում: Այդուհանդերձ, մի շարք ուղղություններով մինչ այդ ձևավորվել էին այնպիսի հարաբերություններ, որոնք հետագա համագործակցության հիմք կարող են լինել: Թուրքիա-ԵՄ ինտեգրվածության հիմնական ուղղություններն են տնտեսականը (ԵՄ-ի հետ առևտուր 1996թ.-ի 28 մլրդ դոլարից 2014թ. հասել է 158 մլրդ դոլարի, թեև ԵՄ մասը Թուրքիայի ընդհանուր առևտրում 2005թ. 49 տոկոսից 2015թ. նվազել է 35 տոկոսի), արտաքին քաղաքականությունն ու անվտանգությունը, էներգետիկան, անօրինական միգրացիայի և փախստականների ճգնաժամի հաղթահարումը:[60] Հաշվի առնելով այդ իրավիճակը՝ Թուրքիա-ԵՄ հարաբերությունների հետագա

[57] The functioning of democratic institutions in Turkey. PACE Resolution 2156 (2017).
http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=23665

[58] European Commission. 2014. Indicative Strategy Paper for Turkey. 2014. http://ec. europa.eu/enlargement/pdf/key_documents/2014/20140919-csp-turkey.pdf.

[59] **Müftüler-Baç M.** Turkey's future with the European Union: an alternative model of differentiated integration, *Turkish Studies*, 2017, **18**, 3, 416-438. DOI: 10.1080/14683849.2017.1300534

[60] **Müftüler-Baç**, նշվ. աշխ., էջ 425-434

զարգացումը որոշ հետազոտողներ[61] սկսել են դիտարկել «դիֆերենցված ինտեգրում» գաղափարի[62] շրջանակներում: Այդ գաղափարի խիստ ձևակերպում կամ սահմանների հստակ արձանագրում դեռևս չկա և դժվար թե լինի, քանի որ այն ընդհանրացնում է տարբեր առանձնահատուկ լուծումներ և կոնկրետության բացակայությունը ԵՄ-ի համար ճկունություն է ապահովում: Այն ենթադրում է կոնկրետ իրավիճակներում ոչ ստանդարտ լուծումների կիրառում՝ ինտեգրման առավել արդյունավետություն ապահովելու նպատակով: Այդ մոտեցումն օգտագործվել է որպես հնարավորություն ինչպես մի քանի անդամ երկրների հետ՝ Մեծ Բրիտանիա, Իռլանդիա, Շվեդիա, որոշ հարցերում առանձնահատուկ լուծումների կիրառման, այնպես էլ որոշ ոչ անդամ երկրների հետ (Շվեյցարիա, Նորվեգիա, Իսլանդիա, Լիխտենշտեյն) որոշ հարցերում այնպիսի հարաբերությունների հաստատման համար, որոնք բնորոշ են անդամ երկրներին: Դա դիտարկվում է նաև որպես անդամակցության ձգտող երկրների և Արևելյան գործընկերության ծրագրում ընդգրկված երկրների հետ ինտեգրման աստիճանական խորացման հնարավորություն[63], ինչը Եվրասիա-

---

[61] **Müftüler-Baç,** նշվ. աշխ.; **Turhan, E.** 2017. Thinking out of the Accession Box: The Potential and Limitations of Internal and External Differentiated Integration Between Turkey and the EU. CIFE Policy Paper no. 58. July 3, 2017. Accessed May 6, 2019. https://tinyurl. com/y67ebtjr; **Cianciara A. K. and Szymański A.** Differentiated integration: towards a new model of European Union–Turkey relations?, *Turkish Studies,* 2019. 21(2): 254-273. DOI: 10.1080/14683849.2019.1618190

[62] **Bellamy, R., and S. Kröger.** A Demoicratic Justification of Differentiated Integration in a Heterogeneous EU. *Journal of European Integration* 2017, **39**, 5, 625–639; **Holzinger K., and F. Schimmelfennig.** Differentiated Integration in the European Union: Many Concepts, Sparse Theory, Few Data. *Journal of European Public Policy* 2012, **19**, 2, 292–305; **Leruth, B., and C. Lord**. Differentiated Integration in the European Union: A Concept, a Process, a System or a Theory? *Journal of European Public Policy* 2015, **22**, 6, 754–763; **Leuffen, D., B. Rittberger, and F. Schimmelfennig**. Dierentiated Integration: Explaining Variation in the European Union. Basingstoke: Palgrave Macmillan, 2013.

[63] **Müftüler-Baç M., and B. Luetgert**. The European Union's Alternative Models for Maximizing its Integration Strategy for Candidates and Neighbour States. A Process of External Differentiation. MAXCAP Working Paper no. 35. November 2016. http://userpage.fu-berlin.de/kfgeu/maxcap/system/files/maxcap_wp_35.pdf;

կան կենտրոնում տեղի ունեցող աշխարհաքաղաքական զարգացումների կարևոր բաղադրիչներից մեկն է:

## Արևելյան գործընկերություն. աշխարհաքաղաքականությո՞ւն, թե ժողովրդավարություն

Երկբևեռ աշխարհակարգի փլուզումն արմատական փոփոխություններ բերեց ոչ միայն այն տարածաշրջաններում, որտեղ դրա արդյունքում առաջացել էր ուժային վակուում, այլև Եվրամիությունում: Մասնավորապես, այդպիսի հետևանք ունեցավ միգրացիայի հսկայական ալիքը, որին դիմակայելը պահանջում է ինչպես հսկայական տնտեսական ու ֆինասական միջոցներ, այնպես էլ վերանայումներ սոցիալական ոլորտում՝ կապված քաղաքակրթական բախումների, արժեքների ու սկզբունքների տրանսֆորմացիայի հետ: Մեկ այլ չափազանց բարդ խնդիր էր 2004թ. ընդլայնումը, որն, իհարկե, ապահովում էր Եվրոպայի ամբողջականությունն ու մեծացնում անվտանգությունը, սակայն, միաժամանակ, մեծացնում էր անդամ երկրների տնտեսական զարգացածության անհամասեռությունն ու քաղաքական որոշումների ընդունման դժվարությունը: Վերջինի ներքին և արտաքին դրսևորումները՝ սահմանադրության ընդունման գործընթացը, գաղթականների ընդունման դժվարությունները, Իրաք զորամիավորումներ ուղարկելու խնդիրը, ուկրաինական ճգնաժամը, Բրեքզիթը և այլն, ավելի քան զգայուն հետևանքներ ունեցան ԵՄ-ի վրա: Սակայն Եվրասիական կենտրոնում ծավալված աշխար-

---

**Schimmelfennig F., and T. Winzen.** Eastern Enlargement and Differentiated Integration: Towards Normalization. *Journal of European Public Policy* 2017, 24, 2, 239–258; **Cianciara A. K.** Differentiated Integration in the European Union and Its Prospects in the Context of Enlargement and Neighbourhood Policies. *The Euro-Atlantic System in a Multi-Polar World. A Forecast, edited by Józef M. Fiszer, JakubWódka, Paweł Olszewski, Tomasz Paszewski, Agnieszka Cianciara, and Agnieszka Orzelska-Stączek,* 105–122. Berlin: Logos Verlag, 2015.

հաքաղաքական մրցակցության տեսակետից հատկապես կարևոր նշանակություն ստացան երկու գործընթացներ՝ դեպի Արևելք ինտեգրման ընդլայնման ու էներգակիրների՝ հատկապես բնական գազի, դեպի Եվրոպա տեղափոխման ուղիների և աղբյուրների բազմազանեցման ծրագրերի իրականացումը: Քանի որ Եվրամիությունը մինչ ԽՍՀՄ փլուզումը կենտրոնացած էր ներքաղաքական հարցերի՝ ինտեգրման արդյունավետության վրա, որտեղ առանցքային նշանակություն ունեն արժեքները, կանոններն ու սկզբունքները, նախկինում կոմունիստական վարչակարգեր ունեցած երկրների հետ ձևավորվող հարաբերություններն էլ սկզբնական շրջանում Բրյուսելը փորձեց կառուցել այդ հիմքի վրա: Առավել ևս, որ այն ԵՄ-ի ինքնության առանցքն է և շահեկանորեն առանձնացնում է այլ ինտեգրման կազմակերպություններից: Սակայն 2004թ. ԵՄ ամենամեծ ընդլայնումից և 2009թ. Եվրոպական հարևանության քաղաքականության (European Neighborhood Policy, ԵՀՔ) հռչակումից[64] հետո պարզ դարձավ, որ միանգամայն նոր մարտահրավերներ են առաջացել նաև արտաքին հարաբերություններում՝ նոր աշխարհակարգի ձևավորման համար մրցակցության խորացման պայմաններում համարժեք դիրքորոշումների և աննախադեպ հարաբերությունների ձևավորման անհրաժեշտություն միանգամայն այլ հատկանիշներ ունեցող հարևանների հետ: ԵՄ արտաքին հարաբերությունների վերանայման անհրաժեշտության վկայություններից մեկն էլ Հարևանության քաղաքականության ձախողումն էր: Արդեն այդ ժամանակ ակադեմիական շրջանակներն առաջարկում էին վերանայել ԵՄ գլխավոր ռազմավարությունը՝ կապը արժեքների, շահերի և ռազմավարության միջև, վերաբերմունքն աշխարհաքաղաքական գործոններին:[65] Մինչ այդ ԵՄ-ն ներկայանում էր որպես խաղաղության, ինտեգրման և անվտանգության նախագիծ, որը դուրս է ավանդական աշխարհա-

[64] European Commission. European Neighborhood Policy Strategy Paper, Communication from the European Commission. COM. (2004), 373.

[65] **Howorth J., and A. Menon.** Still not pushing back. *Journal of Conflict Resolution* 2009, **53,** 5, 727–44. DOI:10.1177/0022002709339362.

քաղաքականության և Realpolitik-ի շրջանակներից և գործընկերների հետ հարաբերություններում կիրառում է փափուկ ուժի միջոցներ՝ արժեքներ և նորմատիվներ:[66] ԵՄ-ն իր գլխավոր նպատակն էր համարում ոչ թե իր ազդեցության գոտիների ձևավորումն, այլ իր արժեքների ու նորմերի տարածման ընդլայնումը: Դա հայտարարվեց նաև Արևելյան գործընկերության ծրագրի (ԱլԳ) նպատակը, որը 2009թ. փոխարինեց ԵՀՔ-ին՝ որպես ավելի կոնկրետ, փոքր թվով երկրներ ընդգրկող և արդյունավետ ծրագիր: Սակայն, ըստ Դ. Կադիերի, ակադեմիական և քաղաքական շրջանակները համարում են, որ ԵՄ քաղաքականությունը ԱլԳ շրջանակներում դարձավ աշխարհաքաղաքական, երբ 2013թ. ուկրաինական ճգնաժամի կապակցությամբ Ռուսաստանը այդ ծրագիրն ընկալեց աշխարհաքաղաքական համատեքստում և այդպես էլ արձագանքեց, մինչդեռ աշխարհաքաղաքական բաղադրիչը ԵՄ մոտեցումներում կարելի է նկատել մինչ ԱլԳ-ի մեկնարկը:[67] Ավելին, կարելի է վստահաբար պնդել, որ ԵՄ պատասխանատուներն ու փորձագետները անհնարին է, որ նկատած չլինեին 2007թ. Մյունխենի Անվտանգության կոնֆերանսում Ռուսաստանի նախագահ Վ. Պուտինի հայտնի ելույթը:[68] Նա հայտարարեց, որ Ռուսաստանը չի համակերպվի թելադրվող միաբևեռ աշխարհակարգի հետ: Ճիշտ է, Վ. Պուտինի խոսքն ուղղված էր առաջին հերթին Միացյալ Նահանգներին, սակայն պարզ է, որ այլևս Մոսկվան այդ ենթատեքստում է դիտարկելու Արևմուտքի դիրքերի ցանկացած փոփոխություն արևելյան ուղղությամբ: Ու միամտություն կլինի ենթադրել, որ այդ ելույթից Բրյուսելն իր հետևություններն արած չէր լինի: Հետևաբար, եթե պետք է արձանագրել ԵՄ քաղաքականության մեջ աշխարհաքաղաքականության դրսևորումների ճշգրիտ մեկնարկն, ապա ամենահավանականը 2007թ. է: Առավել ևս, որ երեք տարին

---

[66] **Zielonka J**. Europe as a global actor: Empire by example? *International Affairs* 2008, **84,** 3, 471–84. DOI:10.1111/j.1468-2346.2008.00718.x.

[67] **Cadier D.** The Geopoliticisation of the EU's Eastern Partnership, *Geopolitics*, 2019, **24**, 1, 71-99. DOI: 10.1080/14650045.2018.1477754

[68] **Putin V.,** Ն շ վ . աշ խ.

բավարար ժամանակ էր, որ ԵՄ պատասխանատուները համոզվեն՝ 2004թ. մեկնարկած ԵՄ հարևանության քաղաքականությունը անարդյունավետ է և արդյունքի հասնելու համար անհրաժեշտ է կիրառել նաև ավանդական աշխարհաքաղաքականության գործիքներ, որդեգրել հիբրիդային աշխարհաքաղաքական մոտեցում[69]՝ արտաքին քաղաքականությունում առաջնային համարելով ԵՄ շահերը, որպես ինտեգրման կազմակերպություն պահպանելով հավատարմությունն իր կարևոր առանձնահատկությանն՝ արժեքների ու նորմերի տարածման գաղափարին:[70] Եթե ԵՀՔ նպատակ էր համարվում սեփական արժեքների, նորմերի ու կանոնների տարածմամբ հարևան տարածաշրջանի հնարավոր վտանգների բնական չեզոքացումն, այդ երկրների ավելի ժողովրդավարացումն ու զարգացումը[71], ապա 2009թ. Արևելյան գործընկերության կիրառումը շատ հետազոտողներ դիտարկում են որպես ԵՄ աշխարհաքաղաքական նախագիծ[72] հետխորհրդային տարածքի

---

[69] **Youngs R.** Is‘hybrid geopolitics’ the next EU foreign policy doctrine? LSE Europpblog. 2017. http://blogs.lse.ac.uk/europpblog/2017/06/19/is-hybrid-geopolitics-the-nexteu-foreign-policy-doctrine/

[70] European Commission. Report on the Implementation of the European neighbourhood policy review. 2017. https://eeas.europa.eu/sites/eeas/files/2_en_act_part1_v9_3.pdf ; **Juncker J. C.** 2018. State of the Union Address. http://europa.eu/rapid/press-release_SPEECH-18-5808_en.htm; **Mogherini F.** 2018. Remarks by high representative/vice-president federica mogherini at the joint press point with wang yi, state councillor and minister of foreign affairs of the People’s Republic of China following the EU-China Strategic Dialogue. https://eeas.europa.eu/headquarters/headquarters-homepage/45706/remarks-high-representativevicepresident-federica-mogherini-joint-press-point-wang-yi-state_en; **Mogherini, F.** 2017. Speech by Federica Mogherini at the Munich Security Conference. https://eeas.europa.eu/headquarters/headquarters-homepage_en/20832/Speech%20by%20Federica%20Mogherini%20at%20the%20Munich%20Security%20Conference.

[71] **Biscop S.** Geopolitics with European characteristics: an essay on pragmatic idealism, equality, and strategy. Egmont papers. 2016. http://www.egmontinstitute.be/geopolitics-witheuropean-characteristics-an-essay-on-pragmatic-idealism-equality-and-strategy/

[72] **Howorth and Menon,** նշվ. աշխ.; **Rynning S.** 2011. Realism and the common security and defence Policy. JCMS: *Journal of Common Market Studies* 2011, **49,** 1, 23–42. DOI:10.1111/j.1468-5965.2010.02127.x ; **Korteweg R.** Mogherini’s

համար: Հեշտ է նկատել, որ եթե ծրագրում Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի ընդգրկումը տրամաբանական էր՝ ըստ այդ երկրների հետխորհրդային հետագծի ու հնարավոր ինտեգրման[73], ապա Բելառուսի և Ադրբեջանի ներկայությունը զուտ աշխարհաքաղաքական նկատառումների հետևանք էր: Սակայն փոփոխությունները դրանով չսահմանափակվեցին: 2013թ. Արևելյան գործընկերության Վիլնյուսյան գագաթաժողովն ակնառու ցույց տվեց, որ թեև ծրագրում ընդգրկված երկրներն ունեն ընդհանուր անցյալ ԽՍՀՄ կազմում, սակայն շատ բաներով տարբեր են, մասնավորապես, քաղաքական համակարգով, մշակույթով և այլն:[74] ԵՄ-ն տարածաշրջանային ընդհանրական մոտեցումներն ու ծրագրերն ավելի հաճախ սկսեց լրացնել վերոհիշյալ դիֆերենցված ինտեգրման՝ յուրաքանչյուր երկրի համար անհատական ծրագրերով:[75] Անհրաժեշտության դեպքում անգամ կիրառվում են բացառիկ լուծումներ, ինչպես դա եղավ Հայաստանի դեպքում: 2013թ. սեպտեմբերին նախագահ Ս. Սարգսյանը հայտարարեց, որ նոյեմբերին Վիլնյուսում Հայաստանը չի ստորագրի ԵՄ-Հայաստան ասոցացման համաձայնագիր (նման համաձայնագրեր ստորագրեցին Վրաստանը, Մոլդովան, ավելի ուշ՝ Ուկրաինան), քանի որ անդամակցում է Եվրասիական տնտեսական միությանը, սակայն պատրաստ է համագործակցությունը շարունակել այլ ձևաչափով: Աշխատանքները շարունակվեցին և 2017թ. ստորագրվեց այլ՝

mission: Four steps to make EU foreign policy more strategic. 2015. https://www.cer.eu/insights/mogherinis-mission-four-steps-make-eu-foreign-policy-morestrategic

[73] **Թորոսյան Տ., Սուքիասյան Հ.,** նշվ. աշխ.

[74] **Nitoiu C., and M. Sus.** Introduction: The Rise of Geopolitics in the EU's Approach in its Eastern Neighbourhood, *Geopolitics,* 2019, **24,** 1, 1-19, DOI: 10.1080/14650045.2019.1544396

[75] **Raik K. and Tamminen T.** Inclusive and Exclusive Differentiation: Enlargement and the European Neighbourhood Policy. *Multi-Speed Europe: Differentiated Integration in the External Relations of the European Union, edited by Juha Jokela*, 45–59. FIIA Report no 38 (Helsinki) January 2014. www.fiia.fi/assets/publications/FIIA_Report38_web.pdf; **Gstöhl S.** Models of External Differentiation in the EU's Neighbourhood: An Expanding Economic Community? *Journal of European Public Policy* 2015, **22,** 6, 854–870.

Գործընկերության համապարփակ և ընդլայնված համաձայնագիր:[76] Ընդ որում, փորձագետներն արձանագրում են, որ թեև Հայաստանը երբեք պաշտոնապես չի հայտարարել ԵՄ-ին անդամակցության մտադրությունների մասին, ինչպես դա արել են Վրաստանն ու Ուկրաինան, սակայն ինտեգրման որոշ ուղղություններով հաջողություններն ավելի տպավորիչ են:[77]

Վերջին 4-5 տարիներին ԵՄ-ի աշխարհաքաղաքական նկրտումներն արդեն նկատելիորեն դրսևորվում են կազմակերպության հիմնարար փաստաթղթերում: Մասնավորապես, դրանք արձանագրում են, որ Հարևանությունը աշխարհաքաղաքական տարածք է և անհրաժեշտ է ԵՄ մասնակցությունը տարածաշրջանի հակամարտությունների կարգավորմանը:[78] Հատկանշական է, որ ԵՄ-ն որպես իր աշխարհաքաղաքական ձգտումների գործոն, մատնանշում է հենց մասնակցությունը հակամարտությունների կարգավորմանը, որը կենսական նշանակություն ունի Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի, Ուկրաինայի և Ադրբեջանի համար ու հատկապես Հարավային Կովկասում աշխարհաքաղաքական նպատակներով բավական հաճախ օգտագործվել է Ռուսաստանի և Միացյալ Նահանգների կողմից:[79] ԵՄ-ի համար այդ հետաքրքրությունն ունի խիստ գործնական նշանակություն: Այդ երկրներով են անցնում բնական գազի տեղափոխման գոյություն ունեցող և

---

[76] CEPA. Comprehensive and Enhanced Partnership Agreement between the European Union and the European Atomic Energy Community and their Member States, of the one part, and the Republic of Armenia, of the other part. 2017, retrieved October 19, 2019, https://cdn3eeas.fpfis.tech.ec.europa.eu/cdn/farfuture/S17QI437S_ttyiGoqFm6o6ecE5 64mEUsiCPcYbga97s/mtime:1514986780/sites/eeas/files/euarmenia_comprehensive_and_enhanced_partnership_agreement_cepa.pdf

[77] **Delcour L., and K. Wolczuk.** The EU's Unexpected Ideal Neighbour? The Perplexing Case of Armenia's Europeanisation. *Journal of European Integration* 2015*,* **37**, 4, 491–507.

[78] European Commission. Joint staff working document: towards a new European neighbourhood policy. SWD(2015) 500 final. http://eeas.europa.eu/archives/docs/enp/docu ments/2015/151118_staff-working-document_en.pdf.

[79] **Torosyan and Vardanyan**, նշվ. աշխ.

նախագծվող հիմնական խողովակաշարերը, որոնցով այն տեղափոխվում է դեպի Եվրոպա կամ նախատեսվում է լուծել Ռուսաստանից զգալի կախվածության նվազեցման խնդիրը: Ակնհայտ է, որ էներգակիրների, հատկապես բնական գազի Եվրոպա տեղափոխման բազմագործոն և բազմավեկտոր հիմնախնդիրն առանցքային նշանակություն ունի ԵՄ-ի, Ռուսաստանի ու Արևելյան գործընկերության վերոհիշյալ 5 պետությունների, ինչպես նաև Թուրքիայի համար:

**Էներգակիրների տեղափոխություն:** Եվրասիական կենտրոնով Եվրասիայից Եվրոպա բնական գազի տեղափոխության ուղիների զարգացումն ունի բացառիկ տնտեսական և աշխարհաքաղաքական նշանակություն: Եթե նավթի դեպքում ցամաքային տեղափոխության արդյունավետությունը համեմատելի է, մասնավորապես, տանկերներով տեղափոխության հետ, ապա բնական գազի դեպքում խողովակաշարերով տեղափոխությունը դուրս է մրցակցությունից:[80] Ավելին, եթե անգամ ապագայում հեղուկ գազի տեղափոխությունը տանկերներով նոր տեխնիկական լուծումների շնորհիվ դառնա շահավետ, կասպյան ավազանի պաշարների դեպքում դա էական ազդեցություն չի ունենա, քանի որ խողովակաշարերն անհրաժեշտ կլինեն անվտանգության առումով բավական բարդ երթուղիներով գազը մոտակա նավահանգիստներ տեղափոխելու համար: Պատահական չէ, որ դեպի Եվրոպա բնական գազի տեղափոխման խնդիրը առանցքային նշանակություն է ստացել Եվրասիական կենտրոնում ծավալված աշխարհաքաղաքական պայքարում: Էներգետիկ անվտանգության խնդիրը ստացել է ընդգծված աշխարհաքաղաքական բնույթ և այդ պատճառով մեծապես բարդացել է: Նոր աշխարհակարգի ձևավորման առաջին՝ «ռոմանտիկ», փուլի[81] ավարտից հետո պարզ

[80] **Balmaceda M. M**. Differentiation, materiality, and power: Towards a political economy of fossil fuels. *Energy Research & Social Science* 2018, **39,** 130–40; **Proedrou, F.** EU energy security in the gas sector: Evolving dynamics, policy dilemmas and prospects. Farnham: Ashgate. 2012.

[81] **Torosyan and Vardanyan**, նշվ. աշխ.

դարձավ, որ բնական գազի տեղափոխման երբեմնի երկբաղադրիչ (պահանջարկի և առաջարկի ներդաշնակեցման) տնտեսագիտական խնդիրը լրացվում է երրորդ՝ տրանզիտային բաղադրիչով, և փոխակերպվում է բարդ՝ բազմագործոն և բազմավեկտոր աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական հիմնախնդրի[82]: Եվրամիության բնական գազի կարիքների 35 տոկոսն ապահովող ռուսական գազը[83] տեղափոխվում է Ուկրաինայի և Բելառուսի տարածքներով անցնող խողովակաշարերով: Այդ երկրները Ռուսաստանի հետ ունեցել են առնվազն երեքական խոշոր վեճեր (Ուկրաինան՝ 2006, 2009 և 2014, իսկ Բելառուսը՝ 2004, 2007 և 2016 թվականներին), որոնց արդյունքում խաթարվել է եվրոպական երկրների գազամատակարարումը: Ուկրաինայի անհուսալիությունը՝ որպես տրանզիտային երկիր[84], ստիպեց Ռուսաստանին ու ԵՄ-ին նախաձեռնել այլընտրանքային խողովակաշարերի կառուցում: Ռուսաստանի նպատակն էր «Հյուսիսային հոսք 2» և «Հարավային հոսք» խողովակաշարերով ապահովել հուսալի գազամատակարարում՝ շրջանցելով Ուկրաինան և Բելառուսը, իսկ Եվրամիության նպատակը՝ «Հարավային գազային միջանցքի» միջոցով նվազեցնել կախվածությունը ռուսական գազամատակարարումից: Հեշտ է նկատել, որ թեև այս բոլոր նախագծերի վերջնանպատակը Եվրոպայի գազամատակարարումն է, սակայն դրանք միմյանց հակոտնյա են: Տրանզիտային բաղադրիչի առանձնահատուկ դերակատարությունն այս նախագծերում թելադրում է առանձնահատուկ մոտեցումներ նաև դրանց ուսումնասիրության ժամանակ:[85] Պատահական չէ, որ հյուսիսից հարավ տարածվող այս գործընթացներում ընդգրկված մեծ թվով երկրների միջև հարաբերությունները հնարավոր չէ մեկնաբանել

---

[82] **Öge K.** Understanding Pipeline Politics in Eurasia: Turkey's Transit Security in Natural Gas, *Geopolitics*, 2019, **24**, 1, DOI: 10.1080/14650045.2019.1687447

[83] Export, G. Delivery Statistics. Accessed August 17, 2019. http://www.gazpromexport.ru/ en/statistics/.

[84] **Öge**, նշվ. աշխ.

[85] **Yafimava K.** The transit dimension of EU energy security: Russian gas transit across Ukraine, Belarus, and Moldova. Oxford: OUP. 2011.

միջազգային հարաբերությունների դասական՝ լիբերալ և ռեալիստական տեսությունների հիման վրա, քանի որ աշխարհաքաղաքական գործոնի ազդեցությունը դրանց վրա չափազանց մեծ է:[86] Կարելի է նշել դրա երեք հիմնական պատճառ. Ռուսաստանի աշխարհաքաղաքական նկրտումները, մեծ թվով տրանզիտային թույլ տնտեսություն ունեցող երկրների ձգտումն՝ առավելագույն օգուտներ քաղել այդ կարգավիճակից և պայմաններ թելադրել առաջարկ անող և պահանջարկ ունեցող երկրներին, նոր աշխարհակարգի ձևավորման հրամայականը: Հատկանշական է, որ այս գործոնները զգալի ազդեցություն ունեցան անգամ բնական գազի տեղափոխման ոլորտում ավանդաբար արդյունավետ համարվող ռուս-գերմանական հարաբերությունների վրա: Դրանք այլ կողմերի ազդեցություններից զերծ պահելու նպատակով սկսվեց «Հյուսիսային հոսք 2» խողովակաշարի կառուցումը: Այն մոտ էր ավարտին, երբ 2019-ի տարեվերջին տեղի ունեցավ ԱՄՆ-ի և Գերմանիայի պաշտոնական տեսակետների կոշտ բախում. «Փետրվարին Լեհաստան կատարած այցի ժամանակ պետքարտուղար Պոմպեոն հայտարարեց, որ Հյուսիսային հոսք 2 նախագիծը գումարները ռուսներին է ուղղում այնպես, որ քայքայում է եվրոպական ազգային անվտանգությունը: Գերմանիան մերժեց այդ ծրագրի գործերին խառնվելու փորձերը՝ դեկտեմբերի 12-ի հայտարարությունում արտաքին գործերի նախարար Հեյկո Մաասը հակադարձեց. «Եվրոպական էներգետիկ քաղաքականությունը պետք է որոշվի Եվրոպայում, այլ ոչ թե ԱՄՆ-ում: Մենք սկզբունքորեն մերժում ենք արտաքին միջամտությունն ու պատժամիջոցները արտատարածքային էֆեկտով»[87]: Տնտեսական պատժամիջոցների սահմանումով ամերիկյան կողմին հաջողվեց դադարեցնել ստորջրյա խողովակաշարի վերջին հատվածի կառուցումը, որն իրականացնում էր շվեյցարական մասնագիտաց-

[86] **Öge**, նշվ. աշխ.
[87] **Jacobs J. and Wadhams N.** U.S. Concedes Defeat on Nord Stream 2 Pipeline, Officials Say, 2019. https://www.bloomberg.com/news/articles/2019-12-18/u-s-concedes-defeat-on-nord-stream-2-pipeline-officials-say?utm_source

ված ֆիրմաներից մեկը: Սակայն փորձագետները նշում են, որ չկառուցված հատվածն այնքան փոքր է, որ ռուսական կողմն այն կարող է ավարտին հասցնել նախատեսվածից մի փոքր ուշ՝ սեփական տեխնիկական միջոցներով:

«Հարավային ճակատում» իրադարձություններն ավելի ակտիվ զարգացան: Սկզբում թվում էր, որ լուրջ մրցակցություն է ծավալվում ռուսական «Հարավային հոսքի» և եվրոպական «Հարավային գազային միջանցքի» միջև: Առաջինը նախատեսված էր ռուսական գազը Սև ծովի հատակով Բուլղարիա, ապա՝ Սերբիա, Հունգարիա, Սլովենիա հասցնելու համար, իսկ երկրորդը պետք է Եվրոպա հասցներ կասպյան բնական գազը: Վերջին նախագիծը ենթադրվում էր իրագործել մի քանի խողովակաշարերով («Նաբուկո», TAP, TANAP), որոնցից գլխավորը՝ ըստ նախագծային տարողության, պետք է լիներ «Նաբուկոն»՝ տեղափոխելով 65 մլրդ խմ ադրբեջանական և թուրքմենական գազը: Ավելին, որպես զարգացում ենթադրվում էր հետագայում ավելացնել ևս երեք ճյուղ՝ միջերկրական, իրանական և Իրաքի քրդական ինքնավարության[88]: Համարվում է, որ «Նաբուկոն» ձախողվեց հիմնականում երկու պատճառով՝ Թուրքիան, որպես տրանզիտային երկիր, պահանջում էր ցածր գներով իրեն տրամադրել գազի 15 տոկոսը՝ ներքին օգտագործման կամ արտահանման համար, և ներդրողների համար նվազել էր նախագծի տնտեսական գրավչությունը:[89] Մինչդեռ, կարելի է վստահաբար պնդել, որ ի սկզբանե «Նաբուկոն» սոսկ աշխարհաքաղաքական նախագիծ էր, հաշվի չէր առնում առկա իրողություններն ու դատապարտված էր ձախողման, քանի որ բացի ադրբեջանական 16 մլրդ խմ գազից, որից 6 մլրդ խմ-ը նախատեսված է Թուրքիայի ներքին օգտագործման համար[90], որևէ այլ

[88] **Berk I., and S. Schulte**. Turkey's role in natural gas: Becoming a transit country? EWI Working Paper, 2017; **Torosyan and Arshakyan** 2017, նշվ. աշխ.

[89] **Traynor I.** EU and Turkey settle Nabucco dispute. *The Guardian*, 2009.07.12. https:// www.theguardian.com/business/2009/jul/12/nabucco-gas-pipeline.

[90] **Sheppard D., and H. Foy.** 2017. US and Russia step up fight to supply Europe's gas. *Financial Times*, August 3.2017. https://www.ft.com/content/352f4cac-6c7a11e7-b9c7-15af748b60d0.

աղբյուրից տեսանելի ապագայում հնարավոր չէր ակնկալել գազի հոսք[91]: Հետևաբար, ակնհայտ է, որ «Հարավային գազային միջանցքը» կարող է իրական ազդեցություն ունենալ ԵՄ գազի ներմուծման դիվերսիֆիկացիայի և Եվրոպայում գազային շուկայում մրցակցության մեծացման տեսակետից, եթե հաջողվի գազի ծավալները մեծացնել՝ ի հաշիվ Թուրքմենստանից և Իրանից եկող հոսքերի:[92] Թուրքմենական գազի տեղափոխությունը թեև ծավալների առումով շատ գրավիչ է ԵՄ-ի համար, սակայն ոչ՝ Թուրքմենստանի, քանի որ Կասպից ծովի հատակով դեպի Ադրբեջան դրա ուղղելուն կխոչընդոտեն մյուս ափամերձ երկրները՝ Ռուսաստանն ու Իրանը, իսկ ցամաքային ճանապարհը պետք է անցնի այդ նույն երկրներով, որոնք հետաքրքրված են իրենց գազի տեղափոխությամբ: Միաժամանակ, Թուրքմենստանը որևէ հետաքրքրություն չունի նման հակադրությունների մեջ մտնելու մի քանի երկրների հետ, երբ առկա է դեպի Արևելք (Չինաստան, Հնդկաստան, Պակիստան և այլն) գազի արտահանման գործնականում անսահմանափակ հնարավորություն: 2004 թվականին Իրանի նկատմամբ ՄԱԿ-ի, ապա նաև ամերիկյան պատժամիջոցները սահմանելուց հետո դժվար է հավատալ, որ ԵՄ-ն տեսանելի ապագայում կարող է ակնկալել իրանական գազի ներմուծման իրատեսական հեռանկար: Առավել ևս, որ 2019-ի վերջին կտրուկ սրվեց առանց այդ էլ բարդ իրավիճակը: Սիրիայում և Իրաքում ամերիկյան ուժերի՝ Հզբոլլահի հենակետերը ռմբակոծելուց հետո դեկտեմբերի վերջին հարձակում տեղի ունեցավ Բաղդադում ԱՄՆ դեսպանատան վրա: 2020թ. հունվարի 3-ին, նախագահ Դ. Թրամփը հայտարարեց, որ դա Իրանի հատուկ ուժերն են կազմակերպել և հրամայեց Բաղդադի օդանավակայանի մերձակայքում հրթիռային հարվածով ոչնչացնել երկու մեքենաները, որոնցից մեկի մեջ

[91] **Թորոսյան Տ., Արշակյան Գ.,** 2017, նշվ. աշխ.
[92] **Siddi M.** The EU's Botched Geopolitical Approach to External Energy Policy: The Case of the Southern Gas Corridor, *Geopolitics,* 2019, **24**, 1, 124-144, DOI:10.1080/14650045.2017.1416606

գտնվում էր Իրանի հեղափոխության պահապանների կորպուսի «Կուդս» ուժերի հրամանատար գեներալ Ղասեմ Սուլեյմանին: Իրանի հոգևոր և աշխարհիկ ղեկավարությունը հայտարարեց, որ անպայման վրեժ է լուծվելու և հրթիռակոծվեցին ամերիկյան ռազմական հենակետերը: Դ. Թրամփը սպառնաց, որ Իրանի կողմից ամերիկացիների նկատմամբ որևէ ոտնձգության դեպքում կխոցվեն Իրանի տարածքում գտնվող ռազմական և հոգևոր նշանակության 52 կարևորագույն թիրախները: Ճիշտ է, հաջողվեց խուսափել ուղիղ բախումից, սակայն այս դիմակայությունը տևական ժամանակ շարունակվելու է, ինչը անհաղթահարելի խոչընդոտ կլինի իրանական գազը ԵՄ ներմուծելու համար: Քանի որ Թուրքիայում ձևավորվել է հակաքրդական նոր ալիք, ապա Իրաքի Քրդստանի տարածաշրջանային կառավարության հետ էլ Անկարայի գազային գործարքները պետք է բացառել:

Այսպիսով, ակնհայտ է, որ «Հարավային գազային միջանցքը», չնայած ԵՄ մի շարք ինստիտուտների (Եվրոպական հանձնաժողով, Էներգիայի գլխավոր տնօրինություն, Էներգետիկ միություն) ու բարձրաստիճան պաշտոնատար անձանց[93] դիվանագիտական ու աշխարհաքաղաքական լուրջ ջանքերին, որևէ էական ազդեցություն չունի ԵՄ ներմուծվող գազի աղբյուրների և խողովակաշարերի դիվերսիֆիկացիայի վրա: Ճիշտ է, հաջողվեց շահագործման հանձնել TAP և TANAP խողովակաշարերը, սակայն անաչառ մոտեցման դեպքում հեշտ է նկատել, որ իրականում դրանք տապալված «Նաբուկոյի» բեկորներն են, որոնք ունակ են տեղափոխելու վերջինիս հայտարարված ծավալների մոտ 15 տոկոսը: Հավանաբար պատահական չէ, որ «Նաբուկոյի» դեմ կատաղի

[93] **Durão Barroso** J. M. 2011. Joint declaration on the Southern Gas Corridor of José Manuel Durão Barroso (President of the European Commission) and Ilham Aliyev (President of the Republic of Azerbaijan). January 13. Baku, the Republic of Azerbaijan.

**Mogherini F.** 2017, նշվ. աշխ.; **Traynor I. and A. Neslen.** Ambitious EU blueprint for energy union to loosen Russian grip on gas, *The Guardian*. 2015 February 24. https://www.theguardian.com/ world/2015/feb/24/eu-blueprint-energy-union-russian-gas-gazprom-maros-sefcovic.

պայքար մղած Ռուսաստանը գրեթե ուշադրության չարժանացրեց TANAP-ի նախագիծը, որը Եվրամիությունը մեծապես կարևորում է: EEAS-ի պաշտոնյաներից մեկը բացահայտում է, որ Եվրամիության համար կարևոր է անգամ էներգետիկ քաղաքականության ու աշխարհաքաղաքականության տեսակետից «Հարավային գազային միջանցքի» ոչ էական հաջողությունը, որն ունի միայն հոգեբանական նշանակություն. «Ֆիզիկապես առկա այլընտրանքային գազն ավելի կարևոր է մենթալ առումով, քանի որ այն հնարավորություն է տալիս Ձեզ խոսելու ռուսների հետ, հատկապես, եթե նրանք գիտեն, որ դուք ուրիշ ոչինչ չեք կարող առաջարկել»[94]:

Սակայն, մի՞թե էներգակիրների տեղափոխման և աշխարհաքաղաքական նպատակներով օգտագործման հսկայական փորձ ունեցող Ռուսաստանում չեն կարող միմյանցից տարբերել դրանց «մենթալ» և իրական ծավալներն ու դրանց նշանակությունն այս կամ այն գործընթացում: Հետևաբար ԵՄ-ն կարիք ունի իրատեսական գնահատականների, դրանց հետ խիզախորեն առերեսվելու՝ ինչքան էլ դրանք հաճելի չլինեն, և ճիշտ շեշտադրումներով կառուցելու հարաբերություններն ու պլանավորելու նախագծեր, գործընթացներ ու դրանց գնահատման առանցքային գործոնները: ԵՄ համար արդյունավետ չեղավ գրավիչ, բայց իրական հիմքեր չունեցող ու խիստ մշուշոտ հեռանկարներ ունեցող նախագծերի ու հարաբերությունների կառուցումը: Ընդ որում, կորուստները ոչ միայն նյութական եղան, այլև արժեքային, քանի որ արտաքին հարաբերություններում աշխարհաքաղաքական գործոնի ազդեցության կտրուկ մեծացումը տեղի ունեցավ այդ հարաբերությունների մեջ նորմերի ու արժեքների նշանակության էական նվազման հաշվին: Պատահական չէ, որ ակադեմիական գրականության մի մասը ԵՄ էներգետիկ անվտանգության խնդիրների լուծման համար կարևորում է լիբերալ շուկայական մոտեցումը[95], իսկ մյուս մասը նախապատվությունը տալիս է աշխարհաքաղաքական

[94] **Bocse**, նշվ. աշխ., էջ 158
[95] **Siddi,** նշվ. աշխ.

մոտեցմանը[96]: Ամենայն հավանականությամբ ԵՄ համար արդյունավետ կլինի ոչ թե ծայրահեղական դիրքորոշումը՝ կիրառելով այս կամ այն մոտեցումն, այլ ձևավորել միջանկյալ մոտեցում՝ չկորցնելով կազմակերպության ավանդական առանձնահատկությունը՝ նորմերի ու արժեքների հստակ գերակայությունը: Կարելի է ենթադրել, որ 2015 թվականին ԵՄ Էներգետիկայի միության ստեղծումը[97] հնարավորություն կտա ձևավորել ավելի արդյունավետ քաղաքականություն:

## Հարավային Կովկաս. Հետխորհրդային տրանսֆորմացիա, հեղափոխություն և սահմանադրականություն

Այս երեք չափումները, թերևս, ամենաառանցքայիններն են բնորոշելու համար այն գործընթացները, որոնք տեղի են ունենում Եվրասիական կենտրոնի տարածաշրջաններից մեկի՝ Հարավային Կովկասի երեք ճանաչված պետություններում՝ Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում, ԽՍՀՄ փլուզումից հետո: Այդ տարածաշրջանում կան նաև երեք չճանաչված պետություններ, որոնց վրա մեծ է աշխարհաքաղաքական գործոնի ազդեցությունը[98], սակայն աշխարհաքաղաքական կողմնորոշումների և հնարավոր զարգացումների գնահատման համար բավարար է դիտարկել իրավիճակը ճանաչված պետություններում՝ վերոհիշյալ երեք չափումների տեսակետից: Ընդ որում, պետք է հաշվի առնել հետևյալ օրինաչափությունը. Հարավային Կովկասում լիարժեք աշխարհաքաղաքական ազդեցություն հնարավոր է ապահովել, եթե առկա է ամբողջական ազդեցություն երեք երկրներից առնվազն երկուսում:[99] Արևմուտքի ազդեցության տեսակետից նման հնարա-

---

[96] **Kuzemko C.** 2014. Ideas, power and change: Explaining EU–Russia energy relations. *Journal of European Public Policy* 2014, **21,** 1, 58–75. DOI:10.1080/13501763.2013.835062.

[97] European Commission. 2015. Energy Union factsheet. Accessed July 5, 2015. http://europa. eu/rapid/press-release_MEMO-15-4485_en.htm.

[98]**Torosyan and Vardanyan**, նշվ. աշխ.

[99] **Torosyan T. 2009**, նշվ. աշխ.

վորություն առկա է Վրաստանի դեպքում, սակայն իրավիճակը շատ ավելի բարդ է, քան թվում է առաջին հայացքից: Երբ 2000-ականների սկզբին հետկոմունիստական տարածքում տեղի ունեցան «գունավոր հեղափոխություններ»[100], որոնցից մեկն էլ Վրաստանի «վարդերի» հեղափոխությունն էր, թվաց, թե նախկին խորհրդային հանրապետությունների ժողովրդավարացման ուղղությամբ ճեղքում է տեղի ունեցել: Վրաստանում հասարակության աջակցությունն ու խանդավառությունը, ինչպես նաև միջազգային հանրության սպասելիքները շատ մեծ էին: Այնքան մեծ, որ հաճախ թույլ չէին տալիս թե մեկին, թե մյուսին տեսնելու գալիք ձախողման ակնհայտ նախադրյալները, սակայն մեծ ոգևորությամբ էին ընդունվում արձանագրվող ոչ համակարգային, բայց տեսանելի հաջողությունները (օրինակ, կոռուպցիայի դեմ պայքարը և դրա վերացումն ամենակոռումպացված ոլորտներից մեկում՝ ճանապարհային ոստիկանությունում): Սակայն «վարդերի հեղափոխության» առաջնորդ Մ. Սաակաշվիլու և նրա գլխավորած քաղաքական ուժի՝ խորհրդարանական ընտրություններում սահմանադրական մեծամասնություն ստացած «Միասնական ազգային շարժման» իշխանության վերջին շրջանում արդեն որոշ սթափեցնող գնահատականներ էին ներկայացվում: Համաշխարհային բանկը նշում էր, որ Վրաստանում ինստիտուցիոնալ բարեփոխումների օրակարգը շարունակում է մնալ անավարտ, «Էկոնոմիստը» մատնացույց էր անում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում առկա ռեկորդային վատ ցուցանիշները, իշխանության կենտրոնացումը նախագահի ձեռքում և այլն:[101] Ավելի ուշ մատնանշվում էին նաև այլ, ավելի վտանգավոր խնդիրներ. Վրացական ժողովրդավարությունը տառապում է պետության և կուսակցության միջև իրական սահմանի բացակայությունից, Սաակաշվիլին երբեք չստեղծեց

[100] **Lincoln A. Mitchell**. The Color Revolutions, University of Pennsylvania Press, 2012; Lane, D. 2009. 'Coloured Revolution' as a Political Phenomenon, *Journal of Communist Studies and Transition Politics,* **25,** 2-3, 113-135, DOI: 10.1080/13523270902860295

[101] Revolutions compared/Rose-tinted lessons https://www.economist.com/eastern-approaches/2011/03/24/rose-tinted-lessons

նշանակալի դատական համակարգ, լրջորեն թուլացրեց օրենսդիր իշխանությունը և իշխանությունը կենտրոնացրեց իր ձեռքում՝ ձևավորելով «քվազիժողովրդավարություն»[102]: Եզրակացությունը լուրջ վտանգներ է մատնանշում. «Ինչպես վրացական փորձը ցույց տվեց, պայքարը կոռուպցիայի դեմ և ժողովրդավարության կառուցումը տարբեր բաներ են»[103]: Սակայն արդեն ուշ էր: Մի քանի ամիս անց Սաակաշվիլու գլխավորած «Միասնական ազգային շարժումը» պարտվեց խորհրդարանական ընտրություններում և կորցրեց իշխանությունը: Մինչդեռ կոպիտ սխալները կուտակվում էին հեղափոխությամբ իշխանության գալուց անմիջապես հետո: Սաակաշվիլին հետհեղափոխական գործունեությունը սկսեց ոտնահարելով երկրի սահմանադրությունը՝ չեղյալ համարվեց 2003թ. խորհրդարանական ընտրությունների միայն համամասնական բաղադրիչը՝ պահպանելով մեծամասնականը շատ պարզ տրամաբանությամբ. հետխորհրդային տարածքում տեղի ունեցող ընտրություններում մեծամասնական ընտրատարածքներում հաղթած ունեվորները միշտ բռնում են իշխանության կողմը: Անձնական ու կուսակցական իրավիճակային նպատակահարմարությունը վեր դասվեց սահմանադրությունից, քանի որ ընտրությունները կարող էին չեղյալ համարվել միայն ամբողջությամբ: Կարճ ժամանակ անց Սաակաշվիլին նախաձեռնեց սահմանադրական փոփոխություններ՝ իշխանությունը կենտրոնացնելու համար իր ձեռքում: Փոփոխությունների նախագծի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովը տվեց խիստ բացասական կարծիք, սակայն Սաակաշվիլին այն արհամարհեց, իսկ եվրոպական կառույցները աչք փակեցին դրա վրա: Ակնհայտ է, որ կայացած ժողովրդարաության երեք չափումներից՝ արժեքային, վարքային և սահմանադրական[104], վերջինը Սաակաշ-

---

[102] **Freedman M.** Georgia's Quasi-Democracy. *Newsweek*, 2019. 9 .08. https://www.newsweek.com/georgias-quasi-democracy-88559

[103] **Caryl Ch.** The Georgian paradox. *Foreign Policy.* January 31 2012. https://foreignpolicy.com/2012/01/31/the-georgian-paradox.

[104] **Linz J. and Stepan A.,** նշվ. աշխ.

վիլին ամբողջությամբ ոտնահարում էր, իսկ արժեքայինի ու վարքայինի մասին հետխորհրդային պետություններում կարելի է խոսել միայն խիստ վերապահումով: Բայց հատվածական մոտեցումների մոլորությունը թույլ չտվեց տեսնել ցավալի իրականությունն ու դրա իրական պատճառներն անգամ 2012թ. խորհրդարանական ընտրություններում Սաակաշվիլու ձախողումից հետո: Խնդրին մակերեսային վերաբերմունքի մասին է վկայում այն փաստը, որ ԱՄՆ նախագահ Բ. Օբաման, ընդունելով Սաակաշվիլուն վերջինիս և իր կուսակցության գահավիժումից ընդամենը մի քանի ամիս առաջ, խոսում էր տարածաշրջանում Վրաստանի մոդելային դերակատարման մասին[105]: Մեծապես կարևորվեց այն հանգամանքը, որ պարտված քաղաքական ուժը իշխանությունը փոխանցեց հաղթողին՝ դա համարելով «իրապես հրաշալի երևույթ» և Վրաստանի համար «նոր հնարավորություն»:[106] Թեև բոլորը գիտեին, որ հաղթած «Վրացական երազանք» կուսակցությունը գլխավորում է միլիարդատեր Բ. Իվանիշվիլին, և թե ինչ է լինում հետխորհրդային տարածքում, երբ օլիգարխը գլխավորում է պետությունը (ինչպես սկզբում եղավ) կամ դրածո վարչապետի պայմաններում ինքն է որոշումներ ընդունում:[107] Պատմությունը կրկնվեց: Կրկին բողոքի բազմահազարանոց ցույցեր, կրկին խորը հիասթափություն՝ կառավարության աշխատանքը «վատ» է գնահատում հարցվածների 60 տոկոսը, խոստումներ չկատարող իշխանություններ և այլն:[108] Ու կրկին հույսն այն է, որ 2020թ. խորհրդարանական ընտրությունները ամեն ինչ

[105] **Caryl,** նշվ. աշխ.
[106] **Fairbanks Ch., Gugushvili A.** A New Chance for Georgian Democracy. *Journal of Democracy*, 2013, **24**, 1, 116-127
[107] **Rogan T**. Georgia's democracy is sinking. Trump should save it. *Washington examiner,* January 31, 2020, https://www.washingtonexaminer.com/opinion/georgias-democracy-is-sinking-trump-should-save-it
[108] **Corboy D., W. Courtney, K. Yalowitz.** Damage Done: Georgia's Struggle to Sustain Democracy. *National Interest*, December 8, 2019. https://nationalinterest.org/feature/damage-done-georgias-struggle-sustain-democracy-102957

կկարգավորեն: Բայց չէ որ դեռևս 2000-ականների սկզբին արդեն պարզ էր, որ հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրներում ընտրությունները կարևոր են, բայց դրանք չեն առանցքային գործոնը[109], այլ բազմակուսակցական համակարգի կայացածությունն է և ժողովրդավարական արժեքների առկայությունը հասարակությունում: Սակայն դա շարունակում է հետաքրքրել միայն ակադեմիական շրջանակներին, ինչպես Վրաստանում[110], այնպես էլ Հայաստանում[111] և Ուկրաինայում[112]: Պատահական չէ, որ այդ երկրներում, չնայած հետագծերի տարբերություններին, հիմնական խնդիրներն ու սխալները կրկնվում են, անկախ այն բանից, հեղափոխական գործընթացները գրեթե միաժամանակ են տեղի ունենում (ինչպես Ուկրաինայում և Վրաստանում), թե զգալի շեղումով, ինչպես Հայաստանում, որտեղ հեղափոխությունը տեղի ունեցավ 2018թ.: Չափազանց թույլ բազմակուսակցական համակարգը, սահմանադրության ոտնահարումները իշխանությունների կողմից, իրական ժողովրդավարական արժեքների ու նորմերի բացակայությունը հասարակությունում բնորոշ են բոլոր երեք երկրներին էլ:[113] Քանի դեռ այս համակարգաստեղծ գործոնների հետ կապված իրավիճակի արմատական փոփոխություններ չեն արձանագրվել, իրական աշխարհաքաղաքական տեղաշարժեր Հարավային Կովկասում հնարավոր չի լինի ակնկալել:

---

[109] **Carothers T.** The End of the Transition Paradigm. *Journal of Democracy* 2002, **13,** 1, 6-21.

[110] **Tetradze L., Melikidze G.** Multi-Party System in Georgia: Peculiarities, Challenges and Perspectives, *Armenian Journal of Poltical Science,* 2016*,* 1, 5-14. DOI: 10.19266/1829-4286-2016-01-05-14

[111] **Torosyan T.** Perspektivy i vyzovy perekhoda Armenii k sisteme parlamentskogo pravleniya [Armenia's transition to the parliamentary system: problems and prospects], *Comparative constitutional review* 2016, 4, 29–40. (In Russian). DOI: 10.21128/1812-7126-2016-4-29-40

[112] **Delcour and Wolchuk**, Ն շ վ . աշ խ.; **Stykow P.** Eurasian Multipartism: Variation on a Theme. *Armenian Journal of Political Science*. 2016, 2, 32-67

[113] **Tetradze L., Melikidze G.**, նշվ. աշխ.; **Stykow P.,** նշվ. աշխ.; **Kalfayan Ph. R.** The Last Bastion of Rule of Law Under Siege. *Armenian Mirror-Spectator*, January 2, 2020. https://mirrorspectator.com/2020/01/02/the-last-bastion-of-rule-of-law-under-siege/

**Խաղի ավարտը**

Իհարկե, լորդ Փալմերսթոնի վերը բերված բանաձևը հավերժական է՝ ազգերը չունեն հավերժական բարեկամներ կամ դաշնակիցներ, ունեն հավերժական շահեր: Սակայն դիտարկված գործոններից միակ, որը կարող է թեկուզ չնչին կասկածի տակ դնել «խաղի ավարտը», Թուրքիայի պահվածքն է Սիրիայում: Բայց արդյո՞ք Թուրքիան ևս մեկ կտրուկ շրջադարձ կանի: Ըստ որոշ հետազոտողների, դա կարող է տեղի ունենալ: «Քանի որ Թուրքիան մշտապես կողմնորոշված է դեպի իր շահերն, ապա ծայրահեղ անհավանական է, որ նրա դիրքն իրենից ներկայացնում է մշտական շեղում իր պատմական արևմտյան դաշինքից դեպի ավելի կայուն ռազմավարական դաշինք Ռուսաստանի հետ: Մեր կանխատեսումն այն է, որ Ռուսաստանի նկատմամբ Թուրքիայի խոր մտավախություններն՝ անվտանգության հետ կապված, կմնան և կարող են առաջացնել ևս մեկ շրջադարձ, եթե Թուրքիան կարողանա գտնել կայուն այլընտրանքային ուժի աղբյուր՝ քրդական անջատողականությանը դիմակայելու համար»:[114]

Իհարկե, Թուրքիան, հավատարիմ իր ավանդական գործելաոճին, կշարունակի ժամանակ առ ժամանակ քայլեր անել, որոնք կնյարդայնացնեն Ռուսաստանին: Այդուհանդերձ, դժվար է հավատալ, որ հնարավոր է իրավիճակի այնպիսի փոփոխություն, որ Թուրքիան հրաժարվի «Թուրքական հոսքից», S-400 հակաօդային պաշտպանության համակարգից և Ռուսաստանի հետ համագործակցության մյուս արդյունքներից: Առավել ևս, որ Եվրասիական կենտրոնում ԱՄՆ դիրքերը թուլանում են և հետագա բարելավումը քիչ հավանական է: Պատահական չէ, որ նախագահ Դ. Թրամփը սկսել է Մերձավոր Արևելքից դուրս բերել զորքերը: Ամերիկացի վերլուծաբանների գնահատականներն էլ շատ լավատեսական չեն. «Իրաքում 18 տարվա պատերազմից հետո պարզ է երկու բան. ահաբեկչության դեմ պայքարի համեստ նպատակն իրականացվել

[114] **Đidić and Kösebalaban**, նշվ. աշխ., էջ 13

է, իսկ լիբերալիզմի նման ինչ որ բանի ձևավորման վերջնական նպատակը՝ երբեք իրապես հնարավոր չի եղել»[115]:

Ավելի ու ավելի հաճախ են կարծիքներ հայտնվում, որ Վաշինգտոնի «լիբերալ հեգեմոնիայի» հետսառըպատերազմյան գլոբալ հավակնությունները անհիմն էին. «Վաշինգտոնը կիրառեց մեծ ռազմավարություն, որը նախապատվությունը տալիս էր ռազմական մեթոդներին ու սպառնալիքներին, ստեղծեց գլոբալ ինտեգրման մի ձև, որը ծառայում էր քչերի անմիջական շահերին, սակայն վտանգում էր շատերի երկարատև շահերը: Լավագույն դեպքում դրանք սխալ նախապատվություններ էին: Վատագույն դեպքում դրանք Միացյալ Նահանգները վերածեցին համաշխարհային ապակառուցողական դերակատարի... Վաշինգտոնի որդեգրած հետսառըպատերազմյան ռազմավարությունը տապալվեց»[116]:

Պատահական չէ, որ իրավիճակը գնահատելիս անգամ ազդեցիկ եվրոպական պետությունների ներկայացուցիչները (Գերմանիայի կանցլեր Ա. Մերկելը[117], ԱՄՆ–ում Ֆրանսիայի դեսպան Ֆ. Դելատրը[118] և այլոք) հաճախ են հայտարարում, որ այն համապատասխանում է բազմաբևեռ աշխարհակարգին: Թեև, հաշվի առնելով վերը դիտարկված մի շարք առանձնահատկություններ, այն ավելի ճիշտ է բնութագրել որպես «ոչ միաբևեռ, ոչ բազմաբևեռ»:

---

[115] **Friedman,** նշվ. աշխ.

[116] **Wertheim S.** The Price of Primacy: Why America Shouldn't Dominate the World, *Foreign Affairs*, 2020, March/April. https://www.foreignaffairs.com/articles/afghanistan/2020-02-10/price-primacy?utm_medium=newsletters&utm_source=twofa&utm_content=20200214&utm_campaign=TWOFA%2002142020%20The%20Folly%20of%20Retrenchment&utm_term=FA%20This%20Week%20-%20112017

[117] Growth must be sustainable, says Angela Merkel. https://archiv.bundesregierung.de/archiv-de/meta/startseite/growth-must-be-sustainable-says-angela-merkel-749578, 2 July, 2017

[118] World View: All change in the multipolar world. https://www.irishtimes.com/opinion/world-view-all-change-in-the-multipolar-world-1.3112934, Jun 10 2017.

## Եզրակացություն

Եվրասիական կենտրոնում տեղի ունեցող իրադարձությունների վերլուծությունը վկայում է, որ

1. ԽՍՀՄ փլուզման հետևանքով կորցնելով Արևմուտքի համար իր երբեմնի կարևոր նշանակությունը՝ որպես ԽՍՀՄ առաջխաղացումը դեպի Մերձավոր Արևելք և նեղուցներ զսպող գլխավոր գործոն, Թուրքիան փորձեց մի քանի ուղղություններով ամրապնդել դիրքերը՝ նոր ձևավորվող աշխարհակարգում և տարածաշրջանում բարենպաստ դիրք ստանալու նպատակով: Առաջին փորձն ուղղված էր Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում ազդեցության հաստատմանը և «թուրքական մոդելի» ներդրմանը, որոնք հաջողություն չունեցան դրա համար անհրաժեշտ ֆինանսական, տնտեսական, քաղաքական և այլ միջոցների անբավարար լինելու պատճառով: Երկրորդ փորձն ուղղված էր Ռուսաստանի ու Արևմուտքի հակասությունների օգտագործմամբ երկու կողմերից էլ շահավետ առաջարկություններ ստանալուն: Թեև որոշ հարցերում այս մարտավարությունը հաջողություն էր բերում, սակայն մի շարք դեպքերում էլ այն պատճառ էր դառնում ռազմավարական նշանակության նախագծերին Անկարայի մասնակցությունը վտանգելուն: 2016թ. Անկարան ամբողջությամբ շրջվեց դեպի Ռուսաստան՝ ստանալով կարևոր դերակատարություն ռուսական գազը դեպի Եվրոպա տեղափոխման նախագծերում («Թուրքական հոսք»), հակաօդային պաշտպանության համակարգեր (S-400) ձեռք բերելով, ռուսական աջակցությամբ սկսելով ատոմային էլեկտրակայանի կառուցումը և այլն: Զուգահեռաբար տեղի ունեցավ ԱՄՆ-ի հետ հարաբերությունների աննախադեպ անկում և կասեցվեց Արևմուտքի հետ համագործակցությունը մյուս ուղղությամբ՝ ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության ծրագիրը: Որոշ հետազոտողներ դեռևս հնարավոր են համարում Թուրքիայի վերադարձն Արևմուտքի հետ համագործակցությանը, սակայն ակնհայտ է, որ հարաբերությունները շատ են խորացել նման շրջադարձերի համար, և որ այդ

դեպքում կհետևի Մոսկվայի խիստ կտրուկ և Թուրքիայի համար շատ ցավոտ արձագանքը: Իհարկե դեռևս ոչ մեկ անգամ նման սպառնալիքը Թուրքիան կօգտագործի իր այս կամ այն մարտավարական քայլի (օրինակ, քրդական խնդրի հետ կապված Սիրիա ներխուժումների) նկատմամբ Ռուսաստանի ըմբռնումը ստանալու համար, սակայն մեծ հավանականությամբ կարելի է արձանագրել, որ շատ փոքր է Թուրքիայի ռազմավարական պլանների կտրուկ փոփոխության հավանականությունը:

2. Թեև ԵՄ արտաքին քաղաքականությունը 2009թ. սկսած ակնհայտորեն կրում է աշխարհաքաղաքական գործոնների ազդեցությունը, մասնավորապես այն դրսևորվել է Արևելյան գործընկերության ծրագրի կիրառմամբ, սակայն որևէ ուղղությամբ, այդ թվում և հետխորհրդային տրանսֆորմացիայի գործընթացում գտնվող երկրների ինտեգրման հետ կապված, էական տեղաշարժեր չեն գրանցվել: Հարկ է հաշվի առնել նաև Թուրքիայի ետընթացը ԵՄ անդամակցության նպատակով պարտավորությունների կատարման հետ կապված: Հետևաբար, կարելի է արձանագրել, որ ԵՄ արտաքին քաղաքականության մեջ աշխարհաքաղաքական բաղադրիչի զգալի ուժեղացումը չապահովեց Եվրասիական կենտրոնում այդ կազմակերպության դիրքերի ամրապնդում կամ դրա տեսանելի հեռանկարներ Արևելյան գործընկերության միջոցով:

3. Եվրասիական կենտրոնի հետ կապված ԵՄ կենսական խնդրի՝ Եվրասիայից բնական գազը խողովակաշարերով դեպի Եվրոպա տեղափոխման երթուղիների ու արտահանող երկրների բազմազանեցման ծրագրերը, որոնց իրագործման մեջ առանցքային նշանակություն ունեն աշխարհաքաղաքական գործոնները, նույնպես չի հաջողվել լուծել ԵՄ նախագծերի հիման վրա: Աշխարհաքաղաքական գործոնի զգալի ուժեղացումը՝ ի հաշիվ մինչ այդ միջազգային հարաբերություններում գործընկերների հետ առնչություններն արժեքների ու նորմերի հիման վրա կառուցելու սկզբունքի, որևէ էական հաջողություն չապահովեց ԵՄ համար: Մինչդեռ, արտաքին քաղաքականության նման տրանսֆորմացիայի արդյունքում կոշտ ավտորիտար ու անգամ տոտալիտար երկրների

(Թուրքմենստան, Ադրբեջան և այլն) նկատմամբ հանդուրժողական վերաբերմունքը վտանգեց այդ արժեքներին կազմակերպության անվերապահ նվիրվածության նկատմամբ հավատը:

4. Հարավային Կովկասում ծավալված իրադարձությունները նույնպես վկայում են, որ տեսանելի ապագայում էական փոփոխություններ չեն ակնկալվում: Տարածաշրջանի երեք ճանաչված պետություններն ունեն միմյանցից տարամիտվող հետխոր հրդային հետագծեր, թեև ընդգրկված են աշխարհաքաղաքական ընդգծված ուղղվածություն ունեցող ԵՄ Արևելյան գործընկերության ծրագրում: ԵՄ-ն և Միացյալ Նահանգները, կարևորելով հեղափոխությունները, կոռուպցիայի դեմ պայքարը, աչք փակեցին սահմանադրական նորմերի լուրջ ոտնահարումների վրա: Ուշադրությունից դուրս մնացին համակարգաստեղծ սկզբունքներն ու արժեքները (բազմակուսակցական համակարգի կայացում, սահմանադրականություն, պետական կառավարման համակարգի առողջացում ու դատական համակարգի իրական բարեփոխումներ) և խրախուսվեցին այնպիսի գործընթացներ, որոնք կարևոր են, սակայն որոշ ժամանակ անց մարում են համակարգաստեղծ գործոնների հարթությունում էական առաջընթացի բացակայության դեպքում: Արդյունքում տապալվեց իրական ժողովրդավարացման գործընթացը Հարավային Կովկասում, հետևաբար և տարածաշրջանային մակարդակով աշխարհաքաղաքական ազդեցությունների էական փոփոխությունների հնարավորությունը:

5. Եվրասիական կենտրոնում աշխարհաքաղաքական մրցակցության հիմնական դերկատարներն են ԱՄՆ-ն և Ռուսաստանը: Վերջին տասնամյակում այս տարածաշրջանում Միացյալ Նահանգների որևէ լուրջ հաջողություն դժվար է արձանագրել: Մինչդեռ Ռուսաստանը, չնայած աշխարհաքաղաքական քաշային կատեգորիաների տարբերությանը, այդ գործոնների զգալի մասի հետ կապված գրանցել է հաջողություններ և ԽՍՀՄ փլուզումից հետո առաջին անգամ լուրջ դերակատարություն է ունեցել աշխարհաքաղաքական գործընթացներում:

6. Ակնհայտ է, որ նոր աշխարհակարգի հաստատման համար Եվրասիական կենտրոնում տեղի ունեցող կարևոր իրադարձություններն ավելի ու ավելի են հաստատում, որ թեև առանձին տարածաշրջանային զարգացումներ շարունակվում են, սակայն հաստատվում է գլոբալ հավասարակշռություն, որը, չնայած առանձին վայրիվերումների, տևական ժամանակահատվածում պահպանվելու է: Թեև որոշ հետազոտողներ և քաղաքական գործիչներ հակված են կարծելու, որ հաստատվում է բազմաբևեռ աշխարհակարգ, սակայն դեռևս լիարժեք բազմաբևեռության հատկանիշներ չկան: Միացյալ Նահանգները, թեև ունեն մյուսներից յուրաքանչյուրի համեմատ մի շարք առավելություններ ու պահպանում են գերտերության կարգավիճակը, սակայն դա բավարար չէ միաբևեռության հաստատման համար: Չինաստանը, Ռուսաստանը թեև ազդեցությունների առումով վերելք են ապրում, սակայն դա բավարար չէ նոր բևեռ ձևավորելու համար: Այս իրավիճակը կարելի է անվանել «ոչ միաբևեռ, ոչ բազմաբևեռ աշխարհակարգ», քանի որ հիմնական դերակատարների դիրքերը հնարավոր չէ ոչ էապես բարելավել, ոչ էապես թուլացնել:

## The End of a Great Geopolitical Reset in the Eurasian Heartland

TIGRAN TOROSYAN
*Brusov State University*
*Center of Perspective Researches and Initiatives, Armenia*

ARAX VARDANYAN
*Center of Perspective Researches and Initiatives, Armenia*

The article considers the nature of new world order, taking into account the potential and aspirations of the countries that have played a key role in the processes and events unfolding in the key geopolitical center of Eurasian Heartland, as well as the results registered so far. In the process of new world order formation, the United States and Russia, are considered to be key participants (along with China, having an implicit impact on the processes under study but a great impact on global developments), the European Union and Turkey – influential participants, and the South Caucasus – a significant region. Developments related to the Syrian crisis, the sharp geopoliticalization of the European Union's foreign policy, the democratization of the South Caucasian recognized states, and international integration are analyzed as guiding processes. The article reveals that a saturated situation emerges, which makes complete domination by one of the competing parties impossible in the foreseeable future, and there are no visible preconditions for changing the current balance of power for a long period of time. It is proposed to describe the established world order based on this approach.